

ԹԻԼ 21678  
Մարտ 11, 1969

Սեծայարգ  
Տիար Ճէք Յակոբեան  
Առննապետ ծխական Խորհուրդի  
Ս. Յովհաննէս Մկրտիչ Հայց. Եկեղեցւոյ  
Մայամի.

Սիրելի Գրն. Յակոբեան,

Ներքակ Ձեզի կը դրկենք պատճէնը Մարտ 11, 1969 թուակիր մեր  
նամակին, ուղղուած Տ. Օհան Ժ. Վրդ. Գապագեանի, որ առանց մեր  
գիտութեան այցելութեան եկած է եւ ներկայիս կը գտնուի Մայամի  
քաղաքին մէջ:

Եթէ ծխական Խորհուրդը փափաքի, կ'արտօնենք Ձեզ որ Տ. Օհան Ժ.  
Վրդ. Գապագեանը հրաւիրէք Մեծ Գահոց յատուկ արտրողութեանց մաս-  
նակցելու եւ զոց պատարագ մատուցանելու Մարտ 16 եւ Մարտ 28 կի-  
րակիներուն:

Սիրոյ ողջունել

ՔՈՐԳՈՍ ԱՐԵՇԳԻՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ

Քիւ 21672  
Մարտ 11, 1969

Հոգեշնորհ  
Տ. Օհան Ժ. Արդ. Գաղազեան  
Սայամի.

Սիրելի Հայր Օհան,

Սաացած ենք Յ Մարտ 1969 թուակիր Ձեր նամակը: Կը ցաւինք որ  
զիտի շկարենանք Ձեզի պաշտօնի կոչել մեր թեմին մէջ ծառայելու  
համար: Մեր թելադրութիւնն է որ Սրուսաղէմ վերադառնաք քանի որ  
անդամ էք Սրբոց Թակոթեանց Միաբանութեան:

Հաճեցէք մեզի յայտնել Ձեր որոշումը որպէս զի ըստ այնմ հրա-  
հանգենք մեր թեմի համայնքներուն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԵՆԳԻՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ

Դեկտեմբեր 9, 1971

Գեր. Տէր Թորգոմ Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
եւ Նախագահ Թեմական Խորհուրդի

Սիրելի Սրբազան

Ի գիտութիւն Ձեր սրբազնութեան եւ Թեմական Խորհուրդիդ կուգամ  
յայտնել բանի մը սրտցաւ իրողութիւններ Մայամիի Եկեղեցիէն եւ համայնը-  
էն ներս:

Ստորագրեալս Աղաւնի Թամիզեան, 20 տարիներ է որ Մայամի կը բնակիմ:  
Միշտ եկեղեցւոյ իբրեւ հաւատացեալ նիւթապէս ու բարոյեապէս օժանդակու-  
թիւնս բերած եմ լի ու լի:

Աւելի քան 10 տասը տարիներ է որ Սուրբ Յովհաննէս Մկրտիչ Հայա-  
ստանեաց Եկեղեցւոյ Տիկ. Միութեան վարչութեան մէջ ծանրակշիւ գործունէ-  
ութիւններ ու պարտականութիւններ ստանձնած եմ ու հաւատարմօրէն անխտիր  
գործաց եմ եկեղեցւոյ բարգաւաճման, միեւնոյն ժամանակ ալ մօտ 5 հինգ  
տարիներ Երզնէսինը նուազած եմ:

Մօտաւորապէս 5 հինգ տարիներ առաջ Տիկ. Միութեան ու Հոգաբարձութեան  
որոշումով մանկամարդ աղջիկներու "Կատարազը սորուեցնելու պարտականու-  
թիւնը տրուեցաւ ինձ: Դժբախդաբար առաջի սկսած օրէն Կիրակնօրեայ վարժ-  
ուհին Տիկ. Զարուհի Գասպարեան չի թողուց աղջիկները ու պատճառաբանու-  
թեամբ պահեց զանոնք 2 ժամէն աւելի դասարանին մէջ: Տիկ. Շագէ Փիլաֆ-  
եան Կարոցին Մատակարարն էր ՍՈՒՓԸՐՎԱՅՁԸՐ ականատես եղաւ այս անհամոյ  
պատահածին, նեղուեցաւ ու հրաւիրեց աղջիկները իր տունը փորձերը ընեն:  
Աշակերտները սորուեցան "Կատարազը ու 2 երկու անգամ երգեցին Կարաց դասը.  
Յետոյ ցրուեցան չարագործներու դրողումով. եթէ ոչ այս օր սքանչելի Կարաց  
դաս պիտի ունենաինք: Այս, մեզ մեծ ցաւ պատճառած է:

Յունուար, 1970ի Տիկ. Միութ. ընտրութեան օրը, Հայր Հմայեակ հնդդ-  
յեան ինձ թոյլ չի տուաւ որ իբրեւ Գանձապահ տրատու անդամներու անունները  
ներկայ բացակայն կարդամ: Մօտս եկաւ ցուցամատը երեսիս շարժելով "Սուս,  
սուս, սուս, սուս չի պիտի խօսիս ըսաւ, ու ինձ դժկամակութեամբ նստեցուց,  
միայն ապակելը պակաս էր. չի թողուց որ իմ գործերուն տէրը ըլլայի.  
Նոյն բանը Տիկ. Հայկունի նիկողոսեանին ըրաւ. յետոյ չարագործ, թողթող-  
ջուն ծերուկ կնոջ մը միջոցաւ ԾՐԱԳՐՈՒԱԾ քուէարկութեան թուկիւթերը բաշ-  
խուեցաւ, 6 հատ նոր անդամագրուող ու մէկ հատ ալ այցելու, 7 հատ ապօր-  
էնի քուէներ տուուեցաւ որոնք պատրաստուած էին այս ուղղութեամբ:

Ոչ օրուայ Ատենապետ եւ ոչ ալ օրուայ Զարտուղար ընտրուեցաւ, ՊԱՇԸ ՊՕՁ-  
ՈՒՍ քուէարկութիւն եղաւ ու ապօրէնութեամբ գաղութիս ամէնէ լաւագոյն,  
շահաբեր, ժիրաջան թանկագին ուժերը արմատախիլ ըրաւ: Յուդային պէս  
ՊՆԱԿ մը կերակուրի ծախեց այս Հաւատարիմ, նիւթապէս, բարոյապէս զոհ-  
ուող անձինքն ու դժբախդաբար անոնց տեղ անկարեկիր, անհամբոյր, գործէ

փախչող պղերգ, յուլ եւ հեղգ, գլխաւորապէս ԿԾԾԻ, Եկեղեցիի մէկ Սէն Դ չի տուողները ներս բերաւ: Այս է մեզի տրուած գնահատանքը: ԱՄՕԹ իրեն:

Մայիս 9, 1971 Մայրերու օրը Հոգաբարձութեան Ատենապետ ծիմի Փիլաֆ-  
եանզիս հրաւիրեց որ երգեմ: Երկու խանդավառ երգեր ժողովուրդին հետ  
բոլորս միասնաբար երգեցինք. ժողովուրդը ոգեորիւած խոր ուրախութեան եւ  
երջանկութեան մէջ կապրէին, յանկարծ Տիկ. Զարուհի Գասպարեան, ժողուեց իր  
արթանեակները ու աղմուկով, Կուտայաներու շարքով պոռալով դուրս ելլան,  
խանգարեցին ուրախ ու զուարթ մթնոլորտը: Ատենապետը մօտեցաւ ինձ ու խոր  
կսկիծով մը զգացուած ըսաւ, ինչ պատահեցաւ, Տիկ. Թամիզեան, այս ինչ խայտա-  
տառակութիւն է, այս ինչ Փէթթի ՃԱԼԸՍԻ է, այս ինչ անվայել վարմունք է, այս  
ինչ աղտոտ նախանձ է, կը տեսնեմ որ ժողովուրդը ոչ միայն չեն բարուողուած  
իմ 10 տասը տարուայ բացակայութեանս այլ աւելի գէշացեր ու անկիրդ եղեր են:

Ցաւով ու կսկիծով հեռացաւ Գր. ճ. Փիլաֆեան ու այն օրէն վերջ չեկաւ  
ոչ Եկեղեցի եւ ոչ ալ Արահը, ու իր Հրաժարականը ուղարկեց նոյն բառերը  
գործածելով:

Գր. ճ. Փիլաֆեանի հեռացումը մեծ կորուստ է Եկեղեցիին, ան կարող էր  
շատ օգուտ ու օգտակար ըլլալ Եկեղեցիին: Կը տեսնէք ինչպէս կը վիրաւորեն:

1970ի ամառուայ ընդացքին այս Եկեղեցույ վարկաբեկումներէ ու սիրտ-  
հատնումներէ ազդուած լուրջ հիւանդացայ ու քանի մը շաքաթներ չի կրցի  
նուազել Երգեհոնը, արդէն Գատարագ ալ չի կար:

Նոյեմբերի սկիսքը Տիկ. Հայկունի Աղամեանին խնդրեցին որ նուազէ.  
անփորձ ու Միւզիքէ տեղեակ չըլլալուն Տիկ. Աղաւնի Թամիզեանին առաջարկ-  
եցէք, ըսած է: Հայր Հ. Ինդոյեան հրաւիրեց զիս, ու ես փորձի գացի:  
Ամէն փորձ լաւ անցաւ. մեկնելէ առաջ հեռախօսը հնչեց. հայր Հ. Ինդոյեան  
պատասխանելէ յետոյ եկաւ ինց մօտ, ցուցամատը կրկին երեսիս շարժելով ըսաւ,  
նչ վաղը կրնաս նուազել, նչ Հայկական ծննունդին եւ նչ ալ ոեիէ կիրակի:  
Կարծես կրկին պիտի ապտակէր ինձ. յանկարծակիի եկայ. ականատես եղողները  
չափազանց տխրեցան ու խորապէս յուզուեցան:

Իմ միակ պատասխանը եղաւ, "ես արժանապատուութիւն ունիմ, ես նիւ Եօրը  
Միւզիքի վարժուհի էի, քանի որ զիս այսպէս պիտի վարկաբեկէիք ինչու  
ուրեմն զիս հրաւիրեցիք:"

Հայր Հմայեակ նախընտրեց իմ սիրտը վիրաւորէ քան թէ խոզվարարին մերժէ:  
Կը ցաւիմ ըսել թէ հայր Հ. Ինդոյեան կոշտ ու կոպիտ ձեւերով, իր դրամի  
մուրացկանութեան ու խառնակչութիւններով մեզի պէս հաւատացեալները կը  
հեռացնէ Եկեղեցիէն: Ինքը ՉԱՐ ԱՐՏԱԻԱՍԴ ԹԱԳԱԻՈՐ մըն է եւ իր չարակամ,  
նախանձոտ, կոռուզան, ժլատ 70 տարեկանէն վեր վհուկի սրտով անուս, անտաղ-  
անդ խալիկներն ու ՓՕՆԻՐԻ ՄԵՏՈՒՄԱՆԵՐԸ որոնք համբաւի հիւանդութենէ կը  
տառապին, հայր Հմայեակ Ինդոյեանն ալ անոնց հետ միասնաբար զաղուծը տակն  
ու վրայ ըրին ու ժողովուրդին միտքը թունաւորեցին:

Նոյեմբեր 10ին վարդկէս Մոզեանի Յուղարկաւորութեան մասնաւորապէս  
հրաւիրուած էի Երգեհոնը նուազել, հայր Հ. Ինդոյեան չի թողուց որ ՕՐԿԸ  
նուազեմ: Ամօթ, հագար ԱՄՕԹ իրեն:

Անցեալի մէջ հայր Հ. Ինդոյեան շատ անգամներ ըսած է մեզի, ես ինչ որ ըսեմ կամ ընեմ, թորգոմը ինձ չի կրնար մերժել, որովհետեւ ես ժամանակին իր կեանքը ազատած եմ:» Չէինք գիտեր թէ Ձեր Սրբազնութիւնը թոյլ կուտայ այսպէս անարգ խօսքեր ընէ Ձեր մասին :

Աւաղ, կը ցաւիմ ի սրտէ թէ մինչ այս օր հաւատացէր եմ կղերներու, միշտ յարգած, պատուած եմ, կը խորհէի թէ անոնք ՍՈՒՐԲ մարդիկներ են:

Միայն Հայր Իսահակ Դազարեանը եղաւ շինարար, բարեջան, Հոգեբուժ, իմաստուն ու անշահախնդիր ճշմարիտ կղեր, այն ալ այս չարագործ, դրամասէր Եկեղեցին շահագործող, եկեղեցին իրենց շահու աղբիւրը ընող գազաններուն կեր եղաւ:

Սօրթկէճը վառեց, Եկեղեցին նորոգել տուաւ ճրիարար հաւատացեալ մարդոց օգնութեամբ. երիտասարդներու դպրաց դաս կազմեց, Հայկական ՕՓԵՐԱ եւ համերգներ սարքեց. Ամերիկեան Բաղարայեաններ եւ երեւելի անձնաւորութիւններ հրաւիրեց, գուարթ ու երջանիկ օրեր պարգեւեց, ժողովուրդին միշտ խանդավառ պահեց:

Ներկայիս հայր Հ. Ինդոյեանը ու իր վհուկները գիս կը հաւածեն, կը վարկաբեկեն, անարգօրէն կը վիրաւորեն որ բոլորովին հեռանամ եկեղեցիէն, ինչպէս ըրին տաղանդաւորներն ու երիտասարդները գոհիկ կերպով խորապէս վշտացուցին այսպանեցին դուրս քշեցին, հեռացուցին եկեղեցիէն: Ալ չեն գար ետ անոնք:

Սրբազան Հայր, ես Հոգաբարձութեան Ատենապետին տիկինն եմ: Մենք ալ մեր արժանապատուութիւնը ունինք: Հայր Հ. Ինդոյեան Հոգաբարձութեան Ատենապետին, Սամուել Թամիզեանին քն կանչեց: Այս կը վայելէ կղերի մը:

Ես եւ ամուսինս միշտ եկեղեցւոյ շահուն, բարւոգման, պայծառացման, ժիրաջան, պարտաճանաչ ու ԱնՉնՈՒՐԱԾ նիւթապէս ու բարոյապէս գոհուած ենք: Մեռած ու ՓԼԱՏԱԿՈՒԱԾ եկեղեցին ու գաղութը միշտ վառ պահեցինք:

Սրբազան Հայր, շատ ու շատ կը խնդրենք Ձեզմէ որ խրատէք հայր Հ. Ինդոյեանն ու իր չարագործները որ գաղութիս համերաշխութիւն եւ խաղաղութիւն տիրէ եւ ոչ բաժան բաժան ընէ. գաղութը փոքրիկ ըլլալուն շատ զգալի է: Եւ կամ հեռացուցէք այս Չարամիտ եկեղեցականը եւ մեզի անկողմնակալ գործող ուրիշ մը դրկեցէք:

Միրելի Սրբազան Հայր, եթէ զինքը չի խրատէք, ես թերթով պիտի խրատեմ:

Ձեր Սուրբ Աջը կը համրուրեմ  
Լիդա-զի Թամիզեան  
Աղաւնի Թամիզեան


A. Tamizian

1456 S.W. 13<sup>th</sup> St.

Miami Fla. 33145

**Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ**  
Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Հեռախոս 371-4484



**ST. JOHN THE BAPTIST**  
**Armenian Apostolic Church of Miami**

Tel. 371-4484

120 N. E. 16TH STREET  
MIAMI, FLORIDA 33132

Նոյեմբեր 22, 1971

Գեր. Տէր Խորգոմ Եպս. Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
եւ Նախագահ Թեմական Խորհուրդի

Սիրելի Սրբազան

Ստորագրեալս Սամուել Թամիզեան, Միամիտ Սր. Յովհաննէս Մկրտիչ Հայաստանեայց Եկեղեցւոյ ծխական Խորհուրդի Ատենապետ, ինչ որ կուզեմ յայտնել կը վերաբերի Միամիտ մեր Եկեղեցիին եւ համայնքին թէ անցեալ եւ թէ մանաւանդ ներկայ կացութիւններուն:

Անցեալի մէջ այնքան լաւ էինք որ յաջողեցանք մեր Սրահին յիսուն հազար տոլարի Մօրթկէճն ալ այրել, երգչախումբ մըն ալ ունէինք, գէշ կամ աղէկ, խանդավառ օրեր կապրէինք: Իսկ ներկայիս ոչ միայն տրատու անդամներուն թիւը շատ վար իջած է այլ անցեալէն ոչինչ մնացեր է եւ խորապէս կը ցաւիմ որ քանի մը անձնաւորութիւններ քացց յատկապէս հայր Հմայեակ Ինդոյեանը, Եկածէն մինչեւ այսօր, հալածանք, գրպարտութիւններ, ստախօսութիւններ, խառնակչութիւններ եւ իր դրամապաշտութիւններով թուճակորած է միմուռորար:

Հայր Հմայեակը, ստախօսութեան եւ դրամապաշտութեան մարմնացում մըն է: Ծխական Խորհուրդը իրմէ իր հասցէն եւ թէլէֆօնի թիւը կուզէ, չի տար, եւ մինչեւ այսօր Հոգաբարձութիւնը չի գիտեր թէ հայր Հմայեակը ուր կապրի եւ ինչ է իր թէլէֆօնին թիւը, հակառակ պարագային եթէ պէտք ունենանք, չենք գիտեր թէ ինչ պիտի ընենք:


Հայր Հմայեակը ոչ միայն գիտ, եւ տիկինս այլ նաեւ քուրթ ծխական Խորհուրդը եւ համայնքը վիրաւորած է եւ անարգած է իր վարկաբեւիչ բառերով ու վարմունքով: Ես իբրեւ հայ հաւատացեալ մը Հովիւի մը ստախօսելու եւ դրամապաշտելու դիրքը չեմ ներած ինքզինքիս:

Վերջապէս ամէն ինչ չափ եւ սահման մը ունի:

Ես եւ ծխական Խորհուրդի անդամներս չենք խորհիր որ հայր Հմայեակը կրնայ օգտակար ըլլալ մեր Եկեղեցիին ու համայնքին: Կը խնդրենք որ զինք

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ  
Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Հեռախոս 371-4484



ST. JOHN THE BAPTIST  
Armenian Apostolic Church of Miami

Tel. 371-4484

120 N. E. 16TH STREET  
MIAMI, FLORIDA 33132

Փոխադրէք ուրիշ տեղ եւ մեզի նոր մը ուղարկէք ինչպէս որ խոստացած էիք այս տարուայ սկիսար երբ հոս ներկայ էիք եկեղեցւոյ տարելիցին:

Սամուել Թամիզեան  
ԱՏԵՆԱԴՆՏ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

Handwritten signature of Samvel Tamizyan. The signature is written in a cursive style and is underlined.

Քիւ 23246  
Դեկտեմբեր 1, 1971

Հոգեշնորհ  
Տ. Հմայեակ Ծ. Վրդ. Խնդոյեան  
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Մայամի.

Սիրելի Հայր Հմայեակ,

Ստացած ենք Ձեր միջոցաւ մեզի դրկուած նոյեմբեր 24 թուակիր  
նամակը Տիգրան Սրկ. Գասրալեանի: Ստացած էինք նաեւ Գրն. Գաս-  
րալեանի նախորդ երկու նամակները որոնք նոյն հարցին կը վերա-  
բերին:

Գահեստի դրուած գումարի մասին եկեղեցւոյդ Ծխական Խորհուրդը  
դիմած էր Քեմական Խորհուրդին, որ հաւանութիւն յայտնած է դրամատան  
մէջ գահեստի անձեռնմխելի գումար մը հաստատելուն, փաստարան Իիչրոտ  
Կրէկորիի եւ դրամատան փաստարանի միջեւ կատարուած Բղթակցութիւններէ  
յետոյ:

Անպատեհութիւն մը չենք տեսնիր Ծխական Թողովին մէջ այդ մասին  
հարցում ընելու եւ իրողութեան համաձայն պատասխան ակնկալելու:  
Կարելի է, ի հարկին, Անդամական Ժողովի մէջ անուններ առաջարկել  
փոխարինելու համար արձանագրուած անձերը: Գահեստի անձեռնմխելի գու-  
մարի հանգամանքը սակայն կը մնայ նոյնը:

Համեցէք Գրն. Գասրալեանին եւս հաղորդել մեր յայտնած գաղափարները:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԶԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ



Քիւ 28245  
Դեկտեմբեր 1, 1971

Բարեշնորհ  
Տիգրան Սրկ. Գասրալեան  
Մայամի.

Սիրելի Գրն. Գասրալեան,

Ստացած ենք Ձեր դրկած նամակները Մայամիի մեր եկեղեցւոյ անու-  
նով դրամատան մէջ պահեստի դրուած անձեռնմխելի գումարի մասին:  
Այդ կապակցութեամբ գրած ենք եկեղեցւոյդ հովիւ Տ. Հմայեակ Ծ.Վրդ.  
Ինդոյեանին, եւ խնդրած ենք իրմէ որ Ֆեզի եւս հաղորդէ մեր յայտնած  
զաղափարները:

Դրամատան մէջ դրուած գումարը եկեղեցիին կը պատկանի: Այդ պատ-  
ժառաւ իսկ որեւէ անպատեհութիւն չկայ որ Ժիական ժողովին մէջ անդամ-  
ները լուսաբանութիւն պահանջեն այդ մասին եւս:

Կը գնահատենք Ձեր հետաքրքրութիւնը եւ բժախնդրութիւնը, եւ վստահ  
ենք որ Ձեր լաւագոյնը ի գործ կը դնէք որպէս զի իրար հասկացողութիւն  
եւ համերաշխ գործակցութիւն ստեղծուի համայնքի անդամներուն մէջ:

Սիրոյ ողջունել

ԹՈՐԳՈՍ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Գերաշնորհ Տ. Թորգոմ Արք. Մանուկեան  
Բարեխնամ Առաջնորդ Հս. Ամեր. Հայոց  
Նիւ-Եորք, Ն.Ե.

Սիրելի Սրբազան.

Սրտի խոր վիշտով կսկսիմ այս նամակը առ ի գիտութիւն Ձեր Սրբազնութեան: Քորձառութեամբ գիտեմ որ անհատական նամակի կարեւորութիւն չէք տար, հետեւաբար, այս նամակս կը ղրկեմ Հուլիի միջոցաւ:

Շնորհակալ եմ որ՝ վերճապէս երեք նամակներէս վերջը, Դեկտ. 1 թուագրեալ պատասխան մը ստացայ, եւ երկրորդ նախադասութեան մէջ ըսիք, «Դրամատան մէջ դրուած գումարը եկեղեցիին կը պատկանի; Այդ պատճառաւ իսկ որեւէ անպատեհութիւն չկայ որ լիակատար թողովին մէջ անդամները լուսաբանութիւն պահանջեն այդ մասին եւս:»

Այո, շատ արդարացի էր Ձեր գրածորատ միայն կրնայ ըսուիլ քաղաքակիրթ ու ճարտարամիտ մարդոց համար: Ես մարգարէացայ իմ յոյ. 24 թիւ նամակիս՝ չորրորդ նախադասութեան մէջ, երբ ըսի, «Կրնաք երեւակայել թէ՛ ինչ կրնայ ըլլալ այդ ժողովի վիճակը՝ երբ Օրինազանցներու համակիրները անտրամաբանօրէն հակառակին:» Անկալածէս շատ աւելի քէջ եղաւ. չինքշաբթի երեկոյան, Դեկտ. 9-ի ժողովը՝ ամօթ ու անպատեհութիւն էր Հայ Ազգին. խայտարակութիւն էր: Յակոբեանները ու իսահակեանները իրապէս ցուցուցին իրենց վայրենիութիւնը:

Անդամական ժողովի հրաւիրագրին մէջ գրուած էր Օրակարգը որ պիտի վերանկատուի պահեստի դրուած հիմնադրամի խնդիրը: Չարմացայ երբ որ սրահը լեցուեցաւ անձերով որ տարիով տեսած էինք, ոչ եկեղեցիի մէջ եւ ոչ ալ սրահի մէջ տրուած ձեռնարկներուն: Այս վերոյիշեալ խումբը նախապէս պատրաստուած էին. ժողովը խանգարելու, հակառակելու, աղմուկ հանելու ու հարցակողական հարցումներ ընելու. կարծես պատեղարգմի դաշտոր եկած էին:

Երբ որ հիմնադրամի խնդիրը եկաւ, այն անդամները որ բնաւ տեղեակ չէին եղելութեան բնական է սկսան հարցումներ ուղղելու. ես արդէն գրաւոր պատրաստած էի բոլոր տեղեկութիւնները մանրամասնութեամբ, խօսք ու զեցի որ կարգամ տեղեկագիրս: (Ներփակ կատանաք պատճէն.) Նախ խնդրեցի Ատենապետէն հսկէ ժողովը որ՝ չ'միջամտեն (մինչեւ կարգալս լրանայ), եւ յարգանք խնդրեցի ներկաներէն որ՝ ուշի ուշով մտիկ ընեն. եւ ըսի, մեծ խնամքով պատրաստեմ եմ որ բոլորիդ հասկնալի ըլլայ. եւ եթէ հարցում մը ունիք, նշանակեցէք կամ մտքերնիդ պահացէք լրանալէս յետոյ պիտի փոքձեմ ձեզի պատասխանել: Լռութիւն պահեցին կարգացածս միջոցին, թիպտեւ փսփսացին, հերիք է, կը բեւէ ըսելով, բայց չ'միջամտեցին, եւ ոչ ալ լսեցին կամ մտիկ ըրին ըսածներուս. որովհետեւ, իրենց գլուխը լեցուած էր կանխաւ պատրաստուած ըսելիքներով:

Կարգալս լրանալէն յետոյ շնորհակալութիւն յայտնեցի իրենց մտիկ ընելնուն. փխսանակ հարցումներ ուղղելու, չաք Յակոբեանի եղբայրը զարլին ելաւ առանց խօսք առնելու ու ումբի մը պէս պայթած՝ հարցակողական Անգղերենով պողաց ու ըսաւ, «Գուք բոլորդ գողեր էք եւայլն. Ասոր վրայ, Պրն. Պետրոս Ազարեանը ելաւ ու ըսաւ, «Պարոն խօսքդ ետ առ եւ ներողութիւն խնդրէ ըսածներուդ.» Բայց «ՓԱԹԸՐՏԻՆ» սկսաւ, քիչ մը վերջը ոտքի ելաւ ու ըսաւ, «Քիչ առջ ժողովը խանգարելուս ու ըսածներուս ներողութիւն կը խնդրեմ, բայց ոչ երկու անձերէն.» հարցուցին, «Ովքեր են այդ երկու անձերը» Մատնանշելով ըսաւ, «Քիւլհանճեան էնտ Պասրալեան ԱՌ ՔՐՈՒՔՍ.» Աղմուկը, «ՓԱԹԸՐՏԻՆ» աւելի շատցաւ, ամեն մարդ ոտքի էր. տեսարանը անկարգագրելի է. քիչ մնաց որ կռիւ պիտի ըլլար իրար հարուածելով. Հայր Հմայեակը կը պողար դադրեցնելու. ով կը լսէ. իսկ, Սամ Թէմիզեանը արձանի պէս կեցած բերանը չբացաւ, կարծես կախորժեր եղած անկարգութենէն. եւ արդէն ինչ գիտէ ժողով վարելէն, անկարող մէկն է: Հայր Հմայեակը ստիպեալ սկսաւ ժողովը վարել. բայց որովհետեւ, աղմուկ հանողները Սամի կողմէն էին, Հայր Հմայեակին ալ մտիկ չէին ըներ: Ոչ քիւլհանճեանը եւ ոչ ես, Տիգրիքապէս կարող էինք պայգարիլ զարլիի ամբաստանութեան դէմ. եղբայրը չաքն ալ չփորձեց իր եղբայրը գսպել:

Այս ամբաստանութիւնը, անպատուութիւնը աւելի քան յիսուս անձերու ներկայութեան, շատ ազդեց ինծի. սրտիս ճնշումը սկսեց ինչ, ըսին, երեսիդ գոյնը նետեր էր. տեղես տեղես շարժելու կարողութիւն չկար. նստած դիտեցի ու լսեցի, կուզէի ելնել եւ իրեն հարցնել թէ՛ ինչ փաստերով մեզ կ'ամբաստանես. բայց, կարող չէի խոսելու, կը վախնայի սրտի կաթուած կուենամ եւ հիւանդանոց կը փոխադրուիմ: Եթէ ամբաստաններս փիզիքայէս առողջ ու երիտասարդ ըլլայինք ամբաստանողին պէս, մեծ կուի մը պիտի ըլլար իրար հարուածելով, ոստիկան պիտի գար, եւ այն ատեն չայու անունը իրական պիտի արատաւորուէր:

Իմ բոլոր կեանքիս մէջ, որեւէ մէկը ինծի այդ բարը չէ կըրցած ըսել. ասանկ անարժան մը պիտի ելնէ եւ այդ բարը ըսէ. Պիտի մարմի. ինչ կընէ եկեղեցական դատարանը այս պարագային. Սրբազան, դուք էք դատաւորը, պետք է որ ջարլին կախա-կայուի:

Այս խումբը եկեղեցասէրներ չեն, այլ քանդողներ են. անուղղակի լսերեմ որ ըսեր են, լսենք պիտի հակառակինք, ամեն ինչ պիտի ընենք մինչեւ եկեղեցին գոցուի: Որովհետեւ, Խոսակ վարդ. այս գաղութէն վոնտուեցաւ, կուզեն այդ կերպով իրենց վրէժը առնել: Գլխաւորները են, Թէմիզեաններ, Ռաթէոսեան, Հայկուհի Նիկողոսեան, Մոմճեան քոյրեր եւ հետեւողներ, որոնց միացած են այս պարագային Յակոբեաններն ալ:

Տիկ. Ռաթէոսեան ելաւ ճառ մը կարդաց, բոլորովին Օրուա Օրակարգէն դուրս. գովաբանեց Խոսակ վարդ. ի կատարած գործունէութիւնը Մայայի մէջ, ան սուրբ մը է ըսելով: Խոսակ վարդ. յաջողած էր հիպոսոսցնել այս կիները, կը խորհին թէ երկինքէն իջած սուրբ մը է. անձի մը մասին որ, ակնջովս լսած, Պոլիսէն, Յունաստանէն, Մելանոնէն վոնտուած եւ Ամերիկայի բոլոր գաղութներէն շնորհունուած անբարոյական եկեղեցականի մը է: Մայամիի մէջն էր որ ամենէն երկար կըրցաւ կենալ. շնորհիւ կամազուրկ չոգաբերձութեան եւ մաս մը անգէտ ու միամիտ անդամներուն:

Ճաք Յակոբեանը խօսք ուզեց ու սկսաւ խօսիլ. ան ալ Օրակարգէն դուրս. ինք զինքը գովեց, ասանկ ըրի, անանկ ըրի կրկնեց ու կրկնեց ճաթած երգապնակի պէս. Հայր Հմայեակը ըսաւ, «Վալ կը բաւէ.» Ճաքը ըսաւ, «Ես խօսք առեր եմ պիտի խօսիմ որքան որ կուզեմ,» եւ շարունակեց անիմաստ խոսակցութիւնը 18 վայրկեան. «Փիլիպոսը» պէս:

Տիկ. Նիկողոսեանը ելաւ, անվայել կերպով, մատնանշելով ու գալելով դէպի Հայր Սուրբին ըսաւ, «Ես գիտեմ Օրենքները կրնամ խոսիլ:» Յարգանք կազապահութիւն չկար, ամեն գլխեն ձայն մը կ'ելներ, ժողովուրդի կէսը ոտքի էր. Սամբթմբած կեցած էր, բայց յաջողեցաւ վիրաւորել Պրն. քիւլհանճեանը ու Տիկ. Դարբինեանը: Եթէ Հայր Հմայեակը սրտի տկարութիւն ունենար՝ կաթուածահար պիտի ըլլար այն երեկոյ:

Ալ ես, շատ անհանգիստ եղայ, ներողութիւն խնդրեցի լսենապետէն՝ ժողովը չ'գոցուած ժամը 11 ին մեկնեցայ, տուն գացի եւ անմիջապէս դեղերս առի որ հիւանդանոց փոխադրուելու վտանքը փարատեմ:

Երկուշաբթի, Դեկտ. 13ին, Ճաքը հեռաձայնեց, պատրուակով մը հետս խօսիլ ուզեց: Ի վիճակի չէի խոսելու, բայց լսեցի զինքը: Փետր. 28, 1969-ին չոգաբարձութիւնը պայմանագրութիւնը ստորագրեր է եւ դրամը ՊԱՆԳ-ան դրերեն, իսկ ՊԱՆԳ-ան ԹՐԸՍԹ ըլլալ չէ ուզեր մինչեւ որ մեր կանոնադրութիւնը կարդայ. անկէ վերջը կը պահանջեն որ Անդամական շողովի արտոնութիւնը ունենան, եւ այն տարի Մայիսի ժողովին կը բերեն եւ իբր թէ կընդունուի: Իրականութեան մէջ, բնաւ չեմ յիշեր այն ժողովին ներկայ ըլլալս եւ կամ անանկ որոշում մը ընդունուիլը. երբ Յանձնախումբը քննէ այն ժողովի արձանագրութիւնը, իրականութիւնը մէջ տեղ կ'ելնէ: Ճաքը ըսաւ ինծի, «Ես միշտ կանոնադրութեան հետեւելով կը գործէի.» Եթէ ըսածը իրաւ է, ինչու փետր. 28-ին փորձեցին առանց Անդամական ժողովի հաւանութեան հիմնադրամը հաստատել:

Արժէ դիտել նաեւ, որ եկեղեցւոյ ներկայ գումարը ԹՐԸՍԹի քով 21,342 տոլար է. մօտ 300 ալ փաստաբանին վճարած են. հետեւաբար եկեղեցին 1,852 տոլար կորուստ մը ունեցաւ մինչեւ հիմայ իրենց ըրած սխալի պատճառաւ:

Սրբազան Հայր, ներեցէք այս երկար գրութեանս, եթէ մեր չոգեւոր Հօր չըիմենք՝ որ ու պիտի դիմենք:

Մնամ ի համբոյր Զեր Ս. Աջոյն  
Յարգանքով Ազգ. Երազման  
Տիգրան Սրկ. Պատրալեան

11/6/70. 9, 1971

Այս հիմնադրամի խնդիրը անգամներու ուշադրութիւնը գրաւեց մեր վերջի ընտրութեան Անդամական ժողովին մէջ, փետր. 25, 1971-ին, երբ տարեկան հաշուեցուցակին մէջ նկատի ունեցան 14,000 տոլարի գումար մը որ ՍԵՆԹՐԱԼ ՊԱՆՔ ԷՆՏ ԹՐԸՍԹ ընկերութեան քով գրուած է Եկեղեցւոյ կառուցման համար, եւ 5941 տոլար ալ Եկեղեցւոյ տանիքի նորոգութեան եւ ներսի ու դուրսի ներկին համար:

Ինչք զատակ ենք որ, այն ատենուան շոգարարձութիւնը Եկեղեցւոյ շահերը պաշտպանելու նպատակաւ այս աշխատութիւնները կատարած են, եւ երկար տարիներու ընթացքին տրամադրած են իրենց թանկագին ժամանակները զոհելով իրենց հանգիստը ժողովներ սարգած են ի ծառայութիւն Եկեղեցւոյ պայծառութեան համար. այդ մասը գովելի է իրենց ըրած ծառայութիւնը ու գնահատանքի արժանի են:

Ես, իբր խոնարհ ծառայ եկեղեցւոյ, կը գնահատեմ ամեն անոնք որ կաշխատին Եկեղեցւոյ պայծառութեան եւ համայնքիս մէջ սէր ու համերաշխութեան համար:

Ըսելիքս շարունակել է առաջ, կուզեմ շեշտել, որ եկեղեցւոյ որեւէ անգամ մեզազրելու դիտում չունիմ, մի միայն, Եկեղեցւոյ եւ համայնքի շահն ու բարեքը նկատի ունիմ եւ ոչ թէ որեւէ անձ. շաւտացէք այս անկեղծ արտահայտութեանս, ինչպէս վերը յիշեցի, գնահատանքի արժանի են անցեալի հոգարարձութեան գործունէութիւնը:

Բայց, իրենց կատարած մաս մը գործերը կանոնադրութեան համաձայն չէ եղած. զանց առնելով կանոնադրութիւնը իրենց խորհածին պէս գործած են. Ես չեմ կրնար ըսել որ զիտումնաւոր ըրած են, ոչ. այլ, անգիտակցաբար Անդամական ժողովի իրաւունքները խլելով, կամ խորհելով որ Անդամական խորհուլին ընտրուած ըլլալնուն, ամեն իրաւունք իրենց տրուած է, ալ կրնան ամեն տեսակ որոշումներ ընել ինչ որ իրենք յարմար կը դատեն. չակառակ որ կանոնադրութեան գիրքը միշտ իրենց առջեւ եղած է. բայց, նկատի չեն առած, եւ իրենց որոշումները տուած են, ինչ որ, կը պատկանի Անդամական խորհուլին:

Վերոյիշեալ Հոգարարձութիւնը իր նիստերուն մէջ կորոշեն հիմնադրամ մը հաստատել, ԹՐԸՍԹի դնելու ար անձեռնմխելի ըլլայ, եւ միայն եկեղեցւոյ կառուցման համար գործածուի, եւ կը պայմանադրուին ՍԵՆԹՐԱԼ ՊԱՆՔ ԷՆՏ ԹՐԸՍԹ ընկերութեան ԹՐԸՍԹ ճիւղին հետ եւ 14,000 տոլար դրամ կը դնեն անոնց քով:

Փետր. 25, 1971-ի Անդամական խորհուլին, երբ չաք Զակորեանին հարցում ուղղուեցաւ այս հիմնադրամին մասին տեղեկութիւն տալու, բաւ. Հիմնադրամը նպատակին պահելու համար, անոնց կը վճարենք հարիւրին կէս տոկոս, իսկ մեր դրամի շահած տոկոսը արդէն այն ծախսը կը գոցէ եւ բան մը ալ կաւելնայ:

Այս բացատրութիւնը լիովին գահացում չտուաւ անդամներուն. Նորընտիր Հոգարարձութիւնը վաւերացուելէն յետոյ, դիմեցինք նոր Ատենապետին, Պրն. Ճէյմս Փիլանեանին որ գանձապահին հետ միասին երթան ՊԱՆՔԱՆ, եւ աւելի մանրամասն տեղեկութիւններ ստանան. գծբազաբար ատենապետը ժամանակ չունեցաւ եւ յանձնարարեց որ ես ընկերանամ գանձապահին տեղեկութիւններ ստանալու. գանձապահ Տիկ. Չապէլ Թէյ ժամադրութիւն ըրաւ ԹՐԸՍԹ պաշտոնեային հետ, միասին գացինք եւ մտտ մէկ ժամ խոսակցութեան միջոցին, ստացանք հետեւեալ տեղեկութիւնները:

1969. փետր. 28-ին, Պարոններ չաք եւ Չարլս Զակորեաններու ստորագրութեամբ կը պայմանադրուին ՍԵՆԹՐԱԼ ՊԱՆՔ ԷՆՏ ԹՐԸՍԹ ընկերութեան ԹՐԸՍԹ ճիւղին հետ, նոր եկեղեցի կառուցման համար 14,000 տոլար հիմնադրամը կը դնեն անոնց քով. Այս գործը, փաստաբանի կամ փաստաբաններու եւ Առաջնորդարանի գիտակցութեամբ կը կատարուի. ԹՐԸՍԹ-ին կը վճարուի տարեկան առնուածը 250 տոլար դրուած դրամի հոգաարարութեան համար, վճարումը աս է մինչեւ որ ունենանք 50,000 տոլար, իսկ անկէ վերջն է որ հարիւրին կէս տոկոս պիտի վճարենք. հետեւաբար, չաք Զակորեանի տուած տեղեկութիւնը սխալ էր. եւ այս տարի փետրուարին, Անդամական ժողովին անմիջապէս վերջը, 6,000 տոլար եւս կը բարգեն 14,000 ին վրայ: ԹՐԸՍԹի պաշտոնեան բաւ, Ինչք իրաւունք ունինք այդ դրամի մէկ մասը շահագործելու կամ բալորը, ի շահ կամ ի վնաս ձեր հաշուոյն

չոս, կուզեմ գիմել Կանոնադրութեան հետեւեալ յօդուածներուն:  
 Առաջին. - 80դ. 33. Միական խորհուրդի իրաւասութիւններն ու պարտականութիւններն են.  
 Ա. Մասը. - ԳՈՐԾԱԴՐԵԼ ԱՆՂԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ:  
 Մա կը հաստատէ որ Անգամական ժողովը, գերագոյն մարմինն է. եւ անոր որոշումներն  
 են որ միական խորհուրդը կամ չօգտաբարձութիւնը պիտի գործադրէ:

Երկրորդ. - 80դ. 15.  
 Մասնաւոր ժողովներ կրնան գումարուիլ նաեւ եկեղեցւոյ անդամներու թիւին առնուազն  
 մէկ-երրորդի կամ յիսուս անդամներու գրաւոր դիմումին վրայ, որ պարագան որ կը  
 ներկայացնէ աւելի փոքր թիւը:  
 Դ. Մասը. - Հաստատել պահեստի հիմնադրամ մը, եւ հարկ եղած պարագային անոր գործա-  
 ծութեան կերպն ու նպատակը որոշել Առաջնորդի եւ թեմական խորհուրդի լիցւցմունքնե-  
 րուն համաձայն:  
 Այս յօդուածի, այս մասը բոլորովին անտեսուած է, անդամներու իրաւունքը իրենց  
 ձեռքէն խլուած է, այս տեսակ որոշումներ կը պատկանի միայն Անգամական ժողովին.

Երրորդ. - 80դ. 14.  
 Տարեկան միական ժողովի (Անգամական ժողովի) պարտականութիւններն են:  
 Բ. Մասը. - Ամէն տարեկան չորս հաշուեփակին, ընդհանուր եկամուտէն հանելէն յետոյ տարե-  
 կան ծախքերը, եկեղեցւոյ պահեստի հիմնադրամին վրայ բարգել Անգամական ժողովի որո-  
 շածին չափ գումար մը:  
 Նաեւ այս յօդուածն անտեսուած է, հակառակ որ 6,000 տուարը բարգելէն քիչ առաջ,  
 միեւնոյն ամսու մէջ Տարեկան Անգամական ժողովը դումարուեցաւ, ինչու չօգտաբարձու-  
 թիւնը նախ չբերաւ ժողովին, որովհետեւ, իրենց բացարձակապէս չուզեցին Անգամական  
 ժողովին կարեւորութիւն տալ, Կանոնադրութիւնը անտեսեցին, եւ ինքնազուրկ ուզած-  
 նուն պէս որոշումներ տուին. Հայաստանեայց եկեղեցին ժողովրդական է եւ ոչ բանա-  
 պետական: Եթէ ամեն անձ իր ուզածին պէս պիտի գործէ, ինչու համար ժողովաւորա-  
 կան ժողովը այդչափ ջանք բրաւ, երեք տարի տեւեց, կրկին ու կրկին սրբագրուել է  
 յետոյ ժողովը ընդունեց եւ ներկայ Կանոնադրութիւնը մէջ տեղ բերաւ:

Բայց, արդարութիւն պիտի չըլլար եթէ այս սխալմունքի յանցանքը անբողշովին չօգտա-  
 բարձութեան վերաբերէինք. Օրինակի համար. Եթէ զաւակ մը, անգիտակցորէն, շիտակ կամ  
 սխալ, հօրմէն բնորոնց մը ընէ, եւ հայրը առանց ստուգելու արտօնութիւն տալ, ասոր  
 հետեւանքը կարելի չէ բոլորը զաւակին վերադրել. ոչ, որքան ալ իրենց այս սխալը  
 ըրին, սխալի մեծը Առաջնորդարանին կը պատկանի որ առանց իրողութիւնը ստուգելու,  
 արտօնած է այս քայլը առնուի. Գուցէ, անոնք ալ բացարձակութիւն մը ունին, բայց  
 որովհետեւ իրենց են Կանոնադրութեան պաշտպանը, շատ դժուար պիտի ըլլայ արդարացի  
 եւ համոզիչ բացատրութիւն մը տալ. Ինչ ալ ըլլայ Կանոնադրութեան համեմատ լուծուե-  
 լու է այս խնդիրը:

Դեռ դրամական հորուստը չեմ մատնանշած, որովհետեւ չեմ գիտեր որչափ է ներկայ  
 գումարը մինչեւ այսօր թրճութիւնը. Այսչափ մը կրնամ ձեզի հաշիւ տալ թէ՛ երկու  
 տարի եւ տասը ամսուա միջոցին մեր գրամը կրնար ըլլալ 22,900 տուարի մօտ եթէ  
 ձեւորող դրամատուն մը դրած ըլլայինք հարիւրին 6 բաղադրեալ տոկոսով: Երեսը ներ-  
 կայիս թրճութիւն կը վճարենք տարին 250 տուար, երեք տարին կընէ 750 տուար վճա-  
 րում մը, անկէ զատ փաստարաններու եւ այլ ծախսեր եղած է որ մենք չենք գիտեր.  
 Այս տարի երբ ՊԱՆՔԱՆ էինք, պաշտօնեան ըսաւ 'ձեր գրամի գումարը 21,000 տուար է:'

Կորուստ կամ ջահ, շատ կամ քիչ, ամենէն կարելոր կէտն է Օրինազանցութիւնը, Կանոնա-  
 դրութիւնը անտեսելն է, եւ Անգամական ժողովի իրաւունքները իրենց ձեռքէն խլելն է.  
 Կանոնադրութիւնը մեր ուղղիչն է, առանց Օրէնքի կատարուած գործը միշտ նեղութիւն  
 կը պատճառէ, ձախողութեան կը տանի եւ ըսի ըսաւներու անզի կուտայ:

Երբ նպատակն է այս սխալը սրբագրել կարելի եղած պայմաններով, եւ ասկէ յետոյ  
 հետեւիլ Օրէնքներուն, որպէս զի ամեն պաշտօնեայ իր Օրինական պարտականութեան եւ  
 իրաւասութեան մէջ գործէ. Այս կերպով, մեր գործը աւելի յաջող, արդիւնալից ու  
 համեմառաջ կրնայ ըլլալ. Վերջապէս, ինչ է մեր բոլորի ծառայութեան նպատակը, աշխա-  
 տիլ մեր պաշտելի եկեղեցւոյ պայծառութեան. սէր եւ համեմառաջութիւն հաստատել մեր  
 գաղութին մէջ, ինչ որ սկիզբները ունէինք: Ես անձնական շահ մը չեմ փստօնք եւ ոչ  
 դուք. Ինչու չհետեւինք Կանոնադրութեան:

Մտ Օրէն մենք Տարեկան Անդամական Ժողով պիտի ունենանք, ուր պիտի ընտրենք, նոր  
չորսարձուութեան անդամներ, զերստուգիչ յանձնախումբ, ընտրական յանձնախումբ եւ այլն:  
Այս պաշտօնեաները ամեն ճիւղին մէջ, եթէ մտի ունենան իրենց իրաւասութիւնները ու  
պարտականութիւնները, եւ գործեն իրենց սահմանին մէջ, շատ աւելի համերաշխ գործակ-  
ցութեան արդիւնք մը կրնանք ունենալ, գաղութիս մէջ սէր ու համերաշխութիւն կրնայ  
գոյանալ. եւ երբ սէր ու համերաշխութիւն ըլլայ, Եկեղեցին կը պայծառանայ ու յաջող  
վիճակ մը կ'ունենայ:

Զեզի կուզեմ պարզ կերպով բացատրել չայց. Եկեղեցւոյ մէջ, անդամական ժողովի ամենա-  
մեծ մարմին ըլլալը. Անգամ մը քննենք մեր Կանոնադրութեան յոգուած 2-ը.

Ամերիկայի չայոց Առաջնորդական թեմը կը բաղկանայ հետեւեալ վարչական մարմին-  
ներէն՝ գլխաւորութեամբ եւ նախագահութեամբ թեմակալ Առաջնորդին:

- Ա - Միական Ժողով.
- Բ - Միական Խորհուրդ.
- Գ - թեմական Պատգամաւորական Ժողով.
- Դ - թեմական Խորհուրդ.
- Ե - Կալուածոց Աւանդական Մարմին.

Նախ, Միական Ժողովն է որ կ'ընտրէ Միական Խորհուրդի անդամները. Միական Ժողովն է  
ներկայացուցիչներ կ'ընտրէ որ թեմական Պատգամաւորական Ժողովը կը գումարուի.  
Քրօն անդամները ղրկուած է տարրեր ծուխերէ: Ղկատի ունեցէք, առանց անդամական  
ժողովներու, այս երկու մարմիններէն եւ ոչ մէկը գոյութիւն կրնար ունենալ:  
Թեմական Պատգամաւորական Ժողովը կ'ընտրէ թեմակալ Առաջնորդը, թեմական Խորհուրդը  
եւ Կալուածոց Աւանդական Մարմինը:

Ասոնց բոլորի ալը ուղկէ բղխեցաւ. ԱՆՂԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԷՆ


չեանաբար, Անդամական կամ Միական Ժողովը, կը գրաւէ կեդրոնական տեղը Ամերիկեան  
չայց. Եկեղեցական կեանքին մէջ:

Կը խնդրեմ զիս սխալ չ'հասկնաք, անդամները անհատապէս չ'ունին այդ իրաւասութիւնը  
որոշումներ տալու կամ Միական Խորհուրդին հրահանքներ տալու, այլ հաւաքաբար եւ  
Օրինաւոր ժողովներու մէջ միայն, մեծամասնութեան քուէով այդ կարելի է ըլլալ:

Այս հիմնադրամի խնդիրը կանոնաւոր կերպով սրբազրելու համայ, կ'առաջարկեմ երեք  
անձէ բաղկացեալ յանձնախումբ մը կազմել քննելու Անդամական Ժողովներու արձա-  
նագրութիւնները, եւ արդիւնքը բերել յաջորդ անդամական ժողովին:

Ս. ՅՈՒՆԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ  
Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Հեռախոս 371-4484



ST. JOHN THE BAPTIST  
Armenian Apostolic Church of Miami

Tel. 371-4484

7 Յոսնոլար, 1972

120 N. E. 16TH STREET  
MIAMI, FLORIDA 33132

Գեր. Տ. Թորգոմ Արք. Սանուկեան,  
Առաջնորդ Հս. Ամերիկայի Հայոց  
եւ նախագահ Պատ. Թեմական Խորհուրդին,  
Նիւ Եորք

Գեր. Առաջնորդ Սրբազան,

Օր նոր՝ առտառոցութիւն ձնոր, անհանդուրժելի եւ անտանելի:


Օր նոր՝ կանոնազանցութիւն եւ անհնազանցութիւն նոր, կորանք եւ արհամար-  
հանք նոր՝ անսրբագրելի:

Պարզ առ ի տեղեկութիւն, Թեմական Խորհուրդի անդամներուդ, կուզեմ յիշեցնել,  
թէ այս համայնքը պառակտած է առաւելապէս առաջնորդին ծանօթ պատճառներով, եւ  
ան տրամադրուած է ինքնազուլուի գործելու, արհամարհելով կարգ կանոն, օրէնք եւ  
վերին իշխանութիւն: Իրարու ճակատող ճղճիմ նկատումներ միջամուխ եղած են ե-  
կեղեցիի գործերուն եւ պատճառ դարձած միջին եւ նոր սերունդներուն եկեղեցիէ  
հեռանալուն եւ օտար եկեղեցիներու կապուիլուն:

Երեք տարւան անձնական փորձառութեամբ ծանօթ եմ համայնքի այս վիճակին, զոր  
անցած տարւան հոկտեմբերէն ի վեր հաստատամտութեամբ կը ջանամ բարւոքել, կա-  
նոնադրութեան տրամադրութիւնները յարգել տալ եւ եկեղեցւոյ շահն ու համայն-  
քի բարիքը պահել: Դժբաղդաբար պարզ եւ ջնջին միջադէպ մը պատճառ եղաւ ինծի  
դէմ Թամիզեան գոյզին հակառակութեան, եւ ասիկա հակառակ իմ բարեացակամութեան,  
լայնախորհութեան, համբերութեան ու հանդուրժողութեան: Դպրաց դասի անդամուհի-  
ները չուզեցին, որ Տիկ. Թամիզեան օրկը նուազէ. եւ ես ստիպուեցայ ցաւով յայտ-  
նել թէ նուազելու չեն ուզեր: Սակայն հակառակութեան թաքուն եւ իրական պատ-  
ճառն այն է որ, եթէ ես զգուած հրաժարիմ, կը խորհին թէ քանի մը կիներու ցան-  
կացած եկեղեցականը (որ ոճրային դատարանէ կը փնտոտուի) կրնայ հոս հովիւ ըլ-  
լալ: Անցած տարի երբ անտեղեակ էի այս կացութեան, իրենք էին որ ինձմէ խնդ-  
րեցին իրենց հովիւ ըլլալ, քանի որ հոս մնալու տնտեսապէս իրենց համար աւելի  
նպաստաւոր էր: Այս մասին կրնայ Առաջնորդ Սրբազանը վկայել: Դժբախտաբար վերո-  
յիշեալ դիտումին գործիք դարձաւ Պրն. Թամիզեան իր կնոջ դրդումով եւ ինկաւ  
իրարու յաջորդող լուրջ արարքներու մէջ՝ դառնալով զրպարտող, կանոնազանց եւ  
անհնազանդ, վնասակար եկեղեցիին եւ համայնքին, ինչպէս կը վկայէ հանրագրու-  
թիւնը:

Ս. ՅՈՒՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ  
Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Հեռախոս 371-4484



ST. JOHN THE BAPTIST  
Armenian Apostolic Church of Miami

Tel. 371-4484

- 2 -

120 N. E. 16TH STREET  
MIAMI, FLORIDA 33132

Հակառակ այս ծուկի կանոնաւորելու նախանձախնդրութեանս եւ անոր համար յանձն առածս ակամայ կորանքներու յօժարութեանս, մերթ կը զգամ, թէ ամէն ջանք զուր է այս համայնքին մէջ գոյացած մտայնութիւնն ու վիճակը սրբազրելու. նանրամտութիւնն ու անմտութիւնը, միացած շարամտութեան ու բանբասանքին, աւեր կը գործեն այս ծուկէն ներս: Ինձ այնպէս կուզայ, որ անհրաժեշտ է դրական խիստ քալլ առնել այս վատթարացումի առաջըն առնելու համար: Ներկայիս թունաւորումի գլխաւոր աղբիւրը եղող Թամիզեանը չէզոքացնելով, ազդարարութիւն եւ դաս կը լլայ բոլոր անոնց, որոնք անոր թելադրութեամբ եւ օրինակով կը գործեն, ինչպէս դուք ալ պիտի համոզուիք Գետազայ իրադարձութիւններու թուումէն: Յոռեզոյնն այն է, որ այս մարդը ինքզինք լիազօր կը կարծէ ըստ կամս գործելու:

Կը հաստատեմ Դեկտ. 17, 1971 թուակիր նամակներուս պարունակութիւնը:

Երկրորդ անգամ քլլալով (Դեկտ. 20, 1971) ծխական խորհուրդը զրաւոր ժողովի հրաւիրեցի (օրինակ մը ներփակ կը գտնէք): Միայն ճան Քիւլիանճեան ժողովի եկաւ: Ծխական ժողովէն պահեստի գումարի ստուգման համար երեք հոգինոց յանձնախումբ մ'ընտրուած էր (ինչպէս արդէն հաղորդած եմ): Դեկտ. 21ին զանոնք ժողովի հրաւիրեցի, եւ ուզեցի որ այս մասին եղած արձանագրութիւններու պահարանի բանալին ունենամ, ի հարկին ծխական ժողովին արձանագրութիւնները աչքէ անցնելու համար: Իրապէս զարմացայ, երբ ծխական խորհուրդի ատենապետ՝ Պրն. Թամիզեան մերժեց բանալին տալ: Անոր համամիտ եղան Թ. Մանուկեան, Օ. Մոզեան: Բնական է ասիկա մերժումն էր ոչ միայն հովիւ-նախագահի, եւ անոր վստահելիութեան, այլ նաեւ անտեսում ծրխական ժողովի որոշման:


Ենորհիւ քանի մը խելահաս տրատու անդամներու խիստ քննդատութեան, երկու օր պէտք եղաւ ատենապետին եւ իր համախոհներուն գիտակցիլ իրենց սխալին, առանց սակայն իրական սրբազրումի, որովհետեւ սոյն յանձնախումբի ժողովին օրը, Դեկտ. 21ի իրիկունք, ծխական խորհուրդի ատենապետի հրահանգով, ծխական խորհուրդի երկու անդամներ (Մանուկեան եւ Օնանեան) զրասենեակ եկան, դարակը բացին՝ առանց բանալին տալու, զրասենեակի դրան առջեւ սպասեցին մինչեւ ժողովի վերջնալը, ապա ներս եկան, դարակը քննելով կղպեցին եւ բանալին առած մեկնեցան, կարծես կառավարութեան կողմէ դրկուած քննիչ ոստիկաններ ըլլային: 24 տարի է այս թեմին մէջ կը ծառայեմ եւ այս տեսակ առտառոց ոգի չեմ տեսած: Այս մարդիկ ինչով արժանի են եկեղեցիի հոգատար ըլլալու:

Բայց դեռ աւելին կայ:



Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ  
Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Հեռախոս 371-4484



ST. JOHN THE BAPTIST  
Armenian Apostolic Church of Miami

Tel. 371-4484

- 8 -

120 N. E. 16TH STREET  
MIAMI, FLORIDA 33132

Երրորդ անգամ ըլլալով ծխական խորհուրդը ժողովի հրաւիրեցի, դարձեալ զըրաւոր, այս անգամ իւրաքանչիւրին ուղղուած, որպէսզի հրաւերն առնելնին չուրանան (հրաւերէն օրինակ մը ներփակ կը գտնէք): նորէն չուզեցին ժողովի զալ, բայց անսալով ծան Քիւլիանճեանի յորդորներուն՝ համակերպեցան եւ եկան, թէեւ Դեկտ.

30ին ժողովին կարդացի Առաջնորդի թիւ 28254 պաշտօնագիրն ու Թամիզեանի նոյ. 22, 1971 թուակիր զրպարտագիրը, որմէ յայտնի եղաւ, որ ատենապետը ոչ ժողով գումարած է, ոչ ժողովականներու հաւանութիւնն առած է եւ ոչ ալ անոնք տեղեակ եղած են նամակի պարունակութեան: նամակը լսելէ ետք ժողովականներ ոչ միայն համաձայն չեղան քիւլ նաեւ բողոքեցին խստիւ:

Ասկէ բացայայտ է, որ ատենապետը իր պաշտօնը չարաշահութեամբ զործած է իր անհիմն հակառակութիւնը յագեցնելու: Յատենի ժողովոյ պահանջեցի, որ հաստատէ իր գրածը: Պատասխան իսկ չկրցաւ տալ: Այս մասին կրկին կանդաղառնամ:


Պահանջեցի որ ժողովին կարդայ Առաջնորդ Սրբազանի իրեն ուղղած թիւ 28285 նամակը, որուն ընթերցումէն ետք, երբ բանալին ուզեցի, ատենապետը՝ Ս. Թամիզեան, նորէն մերժեց եւ յարեց. "Չենք կրնար բանալին տալ. տեղական հոգաբարձութիւնը աւելի բարձր է հովիւէն": Երբ ուզեցին բանալի տալը ժողովի որոշման ենթարկել, իրենց յիշեցուցի, որ առաջնորդի նամակը հրահանգ է եւ ծխական խորհուրդի որոշումին չենթարկուիր: Մտիկ չըրին եւ աւելի քան կէս ժամ վիճաբանելէ ետք, միայն ծան Քիւլիանճեան եւ Ջապէլ Քէյ համամիտ եղան բանալին տալ, իսկ ատենապետը ուզեց հեռաձայնով խօսիլ առաջնորդի հետ քան անսալ նամակին:

Կարծեմ ասկէ աւելի ծանր եւ բացայայտ արարք չի կրնար ըլլալ: Մարդիկ օրէնք, կանոն, առաջնորդ կամ հովիւ չեն ուզեր ծանչնալ, եկեղեցւոյ բարիք եւ համայնքի օգուտ չեն խորհիր, այլ միայն իրենց քմայքը գոհացնել, եկեղեցականը անաւազեք: Ասոր համար ալ միջին եւ նոր սերունդները զգուած հեռացած են եկեղեցիէն եւ կապուած ուրիշ եկեղեցիներու: Ջանոնք ետ բերելու փորձերս զուր անցան: Չեն կրնար վստահիլ ներկայ հոգաբարձութեան մտայնութեան տէր անձերու եւ չեն հանդուրժեր անոնց գործունէութեան, որով կը նախընտրեն հեռու մնալ եկեղեցիէն գործերէն եւ հայկական ձեռնարկներէն:

Եթէ դուք, առաջնորդ եւ վարչութիւն, իբր այս թեմի վերին պատասխանատու մարմին, իրապէս կը ցանկաք այս պառակտած համայնքը զգաստացնել եւ նորէն տակաւ եկեղեցւոյ շուրջ բոլորել տալ, կը խորհիմ, թէ անհրաժեշտ է որ կարգ կանոնի եւ

Ս. ՅՈՒՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ  
Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Հեռախոս 371-4484



ST. JOHN THE BAPTIST  
Armenian Apostolic Church of Miami

Tel. 371-4484

- 4 -

120 N. E. 16TH STREET  
MIAMI, FLORIDA 33132

օրէնքի, ինչպէս նաեւ իշխանութեան հնազանդիլ հրաւիրէք վերջ տալու համար անձնական ճղճիմ հաշիւներու: Այս նպատակով կանկալեմ (չեմ ըսեր կը յանձնարարեմ), որ ձեզից խորհուրդի այժմու տեսնապետը դադրեցուցի ձեզից խորհուրդի անդամակցութենէն իր հետեւեալ արարքներուն համար. -

1. թեմիս կանոնադրութեան դէմ գործելուն համար 1971 թ. - Ա., Զ., Է., Թ., Ժ., ԺԲ., Եւ յօդ. 84:

Բ. - Առաջնորդի հրահանգներն անսաստած է եւ չէ հնազանդած. Յուլիս 9, 1971 նամակը դեռ չէ գործադրուած եւ կը մերժէ գործադրել: Դեկտ. 6, 1971 թուականին չէ հնազանդած:

Գ. - Հովիւն անարգած է եւ զրպարտած է: Հակառակ առաջնորդ սրբազանի բերանացի եւ զրաւոր հաւաստիացումին թէ Յուլիս 9, 1971 թուականին նամակը ինք զրած է, տակաւին կը խորհին թէ հովիւը կեղծած է զայն:

Դ. - Առանց ժողովի եւ ժողովականներու զիտութեան իբր տեսնապետ պաշտօնապէս զրպարտած է հովիւը չարաշահելով իր պաշտօնը, պարզապէս գոհացնելու համար իր անձնական յոռի զգացումները:


Ե. - Մերժած է ընթացք տալ հովիւի ժողովի հրաւերները առանց իրաւ առարկութեան:

Զ. - Հակառակ առաջնորդի հրահանգին եւ ձեզից ժողովի որոշումին, մերժած է եւ դեռ կը մերժէ արձանագրութեանց պահարանի քանակին տալ, ուր կը գտնուի նաեւ տրատու անդամներու տետրակը, որուն պէտք ունի ընտրողական յանձնախումբը թեկնածուներու ցանկի պատրաստութեան համար:

Այս պարագաները կը հաստատեն, որ տեսնապետն ու իր գլխաւոր համախոհները (Թ. Մանուկեան եւ Օ. Մոզես) անգիտակ են իրենց պաշտօնին եւ պատասխանատուութեան: Հարկ է այս վերջի երկուքն ալ շրջան մը զրկել ձեզից խորհուրդի ընտրութեան ցանկին անցնելէ (արդէն այս տարի կը դադրին): Իսկ ձեզից խորհուրդի մնացեալ անդամներուն (բացի ժան Կիւլիան) ազդարարել, որ իղճի մտօք եւ զիտակցութեամբ կատարեն իրենց պարտականութիւնը՝ կանոնադրութեան համեմատ, անսալով առաջնորդի հրահանգներուն եւ գործակցելով հովիւին ով ալ ըլլայ անիկա: Որպէսզի ասով անոնք զիտակցին, որ իրենց պաշտօնին համար պատասխանատու են նաեւ առաջնորդարանին:

Գալով իմ մասին զրուած ստայօդ եւ նենգ զրպարտազրին, կանկալեմ որ Պրն. Թամիզեան կամ հաստատէ անոր պարունակութիւնը, եւ կամ զրաւոր յետս կոչէ զայն:

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ  
Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի



ST. JOHN THE BAPTIST  
Armenian Apostolic Church of Miami

Հեռախոս 371-4484

Tel. 371-4484

- 5 -

120 N. E. 16TH STREET  
MIAMI, FLORIDA 33132

Կակնկալեմ նաեւ, որ թեմիս եկեղեցական իշխանութիւնը (առաջնորդ եւ թեմական խորհուրդ) պաշտպան կենանի իրենց պաշտօնեային երբ կանխրաւուի, այլապէս պիտի ստիպուի մհարկ եղած միջոցն ձեռք առնել արժանապատուութիւնս պաշտպանելու համար:

Իսկ ատենապետի՝ Ս. Թամիզբանի եւ իր կնոջ դէմ եղած հանրագրութեան համար, ի մտի ունենալով առաջնորդ սրբազանի Դեկտ. 6, 1971 թուակիրը, կը խորհիմ, հինգ անձերէ բաղկացեալ "Ղատաստանական խորհուրդ" մը կազմել, անոնց վաւերացումը առաջնորդարանի ենթարկել, ապա կողմերը այս խորհուրդին կանչել, զանոնք լսել եւ արդիւնքը թէ առաջնորդարան հաղորդել եւ թէ կողմերուն, որովհետեւ խոհեմութիւն չեմ նկատեր համայնքը յուզող ամէն հարց ծխական ժողովին տանիլ, ուր անհասկացողութեան պատճառաւ հարցերը կրնան աւելի բարդանալ քան լուծուիլ:

Նկատի ունենալով շատ մը ծխականներու կարծիքը, ղատաստանական խորհուրդի համար յարմար կը համարիմ հետեւեալները.-

Տիգրան Ա. Սարկաւազ Պասըալեան, երկար տարիներու եկեղեցւոյ ծառայող, ողջմիտ եւ անկողմնակալ:

Յովհաննէս Յովհաննէսեան, ազգ. եւ եկեղեցական գործերու փորձառու, ողջմիտ եւ անկողմնակալ:

Ճէյմ Փիլաւեան, իրաւաբան եւ նախկին ատենապետ եւ ողջմիտ, ուղղամիտ:

Տիգրան Մովսէսեան, եկեղեցւոյ բոլորանուէր ծառայող, ողջմիտ եւ անկողմնակալ:

Գրիգոր Կէօկեղեան, եկեղեցասէր, ազգասէր, ողջմիտ եւ անկողմնակալ:

Եթէ առաջնորդարանը ուզէ այս մարմինը կրնայ մնայուն ընել եւ այս հեռաւոր համայնքի մասին հարկ եղած ատեն տեղեկութիւն առնել:


Կը կրկնեմ, եթէ իրապէս կուզէք որ օգտակար ըլլամ այս ծուխին եւ զայն դուրս բերեմ իր այսօրուան անկերպարան վիճակէն, պէտք է առաջնորդ եւ թեմական խորհուրդ, օգնեն ինձի, այլապէս իրական պատասխանատուութիւնը Ձեզի կիյնայ: Անհրաժեշտ է, որ Վարչութիւնդ առաջնորդի միջոցաւ զգացնէ իր իրաւասութիւնը յօգուտ եկեղեցիին եւ համայնքին:

Այս պարագաները Ձեր լուրջ նկատողութեան եւ կարգադրութեան յանձնելով,  
մնամ

Տիրաւանդ Ողջունիւ Սիրոյ  
Հմայեալ Ս. Գրիգորի Իմաստան

Ս. ՅՈՒՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ  
Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Հեռախոս 371-4484



ST. JOHN THE BAPTIST  
Armenian Apostolic Church of Miami

Tel. 371-4484

120 N. E. 16TH STREET  
MIAMI, FLORIDA 33132

26 Դեկտ., 1971

Կիրակի

Պրն.

Երրորդ անգամ ըլլալով քեզ կը հրաւիրեմ ձեզան  
Խորհուրդի ժողովին, այս անգամ այս երկուշաբթի իրիկուն  
ժամը 7:00ին, (որ է վաղը Դեկտեմբեր 27ին), եկեղեցւոյ սը-  
րահի գրասենեակը, նկատի առնելու համար Առաջնորդ Սրբազանի  
նամակներն ու կարգ մը անյետաձգելի ծիսկան գործեր:

Ժողովի չկարենալ գալու առարկութիւններդ, եթէ ունիս,  
հաճիս գրաւոր ինձի յանձնել:

Ողջունիւ եւ Օրհնութեամբ

*Մայրապետական*  
Հմայեակ Ե. Վարդ. Ինդոյեան

Հոգ. Հովիւ եւ նախագահ ծիսկան Խորհուրդի

*Տրամադրում*  
~~Տրամադրում~~

- 1. Թատեյան
- 2. Վառլեան
- 3. Բրտի
- 4. Գրիգորյան
- 5. Թամազյան
- 6. Քրիստոսյան

*Թատեյան ապա ինչ  
չպիտեւ թատեյան թեյան  
չիտեւ Գրեյ. 30 Դե. և հասա  
սիրոյ:*

*Քաջաբայ Եւ Զ. Երսիկյան (Գրիգորյան)*



# Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ  
ԲՈՐԳՈՄ ԱՐԺԵՂԻՍԿՈՂՈՍ ՄԵԼՈՒԿԵՆ  
Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016 \* MURRAY HILL 6-0710

Archbishop Corkom Manougian, Primate

Քիւ 28775  
Նոյեմբեր 30, 1972

Արժանաշնորհ  
Տ. Քիւրեղ ԶԻՆՅ. Գալֆայեան  
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Նախագահ Երեւան Խորհուրդի  
Մայմի.

Սիրելի Տէր Կիւրեղ,

Ստացած ենք Նոյեմբեր 20 թուակիր Ձեր նամակը: Դրական պատասխան  
մը ապու չամար Ձեր խնդրանքին անհրաժեշտ է որ մեզի դրկէք հետեւ-  
եալները:


1. Երեւան Մասնաւոր Ժողովի անենագրութիւնը ստորագրուած Նախագահին,  
Աանագրութիւն եւ Աանագրութիւն կողմէ:
2. Համայնքին արատու անդամներուն ընդհանուր թիւը:
3. Հովուապետին մը գնմու չամար գահանջուած գումարը ինչպէս եւ ինչ  
պայմաններով պիտի ապահովէք:

Սիրոյ ողջունիւ

ԲՈՐԳՈՄ ԱՐԺԵՂԻՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ  
Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Հեռախոս 371-4484



ST. JOHN THE BAPTIST  
Armenian Apostolic Church of Miami

Tel. 371-4484

120 N. E. 16TH STREET  
MIAMI, FLORIDA 33132

Նոյեմբեր 20, 1972

Գերաշնորհ  
Տ. Թորգոմ Արք. սանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի եւ  
Նախագահ Թեմական Խորհուրդի  
սիւ Եորթ, Ն.Ե.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Ուրբաթ նոյեմբեր 17, 1972-ին տեղի ունեցաւ Միական բացառիկ ժողով մը  
Ֆրեսուս եւ չորս տրատու անդամներու մասնակցութեամբ: Այս անդամներու  
միաձայնութեան որոշումով ընթացք տրուեցաւ ժողովի Օրինաւորութեան ըստ  
Թեմիս Կանոնադրութեան, որ տրուած որոշումը վաւերացուի քերիս սրբազնութեան  
եւ Թեմական Խորհուրդին կողմէ:

Սեր այս ժողովը որդեգրեց հետեւեալ բանաձեւը թէ, յիշեցուցս համար գտել  
Հովիւատուն մը 30.000 մինչեւ 40.000 տուրի արժողութեամբ, եւ Միական Խորհուրդին  
յանձնեց այս որոշումին գործադրութիւնը:

Սրբազան Հայր, կը խնդրենք քերիս սրբազնութենէն եւ Թեմական Խորհուրդէն,  
որ ընդունելէ յետոյ սոյն որոշումը եւ վաւերացնել վերջ տեղեակ պահէրք  
ասմիջապէս մեզ եւ Միական Խորհուրդը:

Արդ, որդիական ջերմ զգացումներով կը յայտնենք մեր կանխայայտ  
շնորհակալութիւնները ու կսպասենք քերիս դրական պատասխանին:

*Յարութիւն Գասպարեան*  
ԶԱՐՈՒՀԻ ԳԱՍԿԱՐԵԱՆ, ԱՏԵՆԵՐԳՈՐ

ՍՏՄԻԱՍ ԺՈՂՈՎԻՆՆԱԿԱՆ  
*Կարգաւոր Ստեփաննոս*  
ԿՐԻՍՏՈՍ ԿԷՆՅԱԿԻՄԻԱՆ  
ԳԱՐԼ ԶԷՅԹՈՐՆԵԱՆ ԱՏԵՆԱԳԵՏ

Քիւ 23312  
Յունուար 24, 1972

Հոգեշնորհ  
Տ. Հմայեակ Ժ. Կրդ. Ռնդոյեան  
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Նախագահ Ժիական Խորհուրդի  
Մայամի.

Սիրելի Հայր Հմայեակ,

Ներքակ կը դրկենք օրինակը 24 Յունուար 1972 թուակիր մեր նամակին որ կը ներկայացնէ Քեմական Խորհուրդի որոշումը Մայամիի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ Ժիական Խորհուրդի ատենապետ Տիար Սամուէլ Քամիզեանի մասին, զայն դադրեցնելով Ժիական Խորհուրդի անդամութենէն:

Համեցէք այս որոշումը նկատի ունենալ եւ գործադրել ըստ պատշաճի:

Այս առթիւ կը հրահանգենք որ Հովիւ եւ Ժիական Խորհուրդ գիտակից ըլլան իրենց պարտականութեանց եւ համերաշխ ոգիով աշխատին մեր համայնքի հոգեւոր, մշակութային եւ ընկերային կեանքին կազմակերպման եւ յառաջդիմութեան: Այլապէս պիտի պարտաւորուինք զանցառու եղողներուն մասին հարկ եղած որոշումը առնել, ապահովելու համար մեր եկեղեցւոյ կարգապահութիւնը, ի խնդիր մեր համայնքի բարգաւաճման:

Սիրոյ ողջունելի

ԹՈՐԳՈՍ ԱՐԶԵՊՈՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Քիւ 28818  
Յունուար 24, 1972

Մեծայարգ  
Տիար Սամ Քամիգեան  
Առնապետ Ժական Խորհուրդի  
Ս. Յովաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Մայամի.

Յարգելի Գրն. Ս. Քամիգեան,

Քեմական Խորհուրդի Յունուար 18, 1972 նիստին մէջ նկատի առինք այն բո-  
լոր հարցերը զորս դուք յարուցած էիք Յուլիս 1971 թուականէն սկսեալ, ինչպէս  
նաեւ այն թղթակցութիւնները որոնք տեղի ունեցան Առաջնորդին հետ՝ ի պատասխան  
նամակներու որոնք ստացած էինք Ձեզմէ եւ Եկեղեցւոյդ Հովիւ Տ. Հմայեակ Ծ.  
Վրդ. Ինդոյեանէն:

Դժբախտաբար Քեմական Խորհուրդի մէջ եկանք այն եզրակացութեան որ դուք  
առանց Ժական Խորհուրդի անդամոց գիտութեան եւ իւրանութեան անոնց անունով  
նամակ կը գրէք Առաջնորդին, անպատշաճ վերաբերմունք ցոյց կուտար Առաջնորդին  
կողմէ Հովիւին միջոցաւ Ժական Խորհուրդին ուղղուած նամակները աննկատ թող-  
լով, եւ անտես ընելով Առաջնորդին իրաւանգները եւ Ձեզի ըրած թելադրութիւն-  
ները հեռաձայնով եւ նամակով: Մինչեւ այսօր ապակին չենք ստացած պատասխանը  
Դեկտեմբեր 22, 1971 թուակիր մեր նամակին որ Ձեզի ուղղուած է:

Ուստի Քեմական Խորհուրդի մէջ հետեւեալ որոշումը առինք Ձեր նկատմամբ. -  
"Նկատի առնելով որ Մայամիի Ս. Յովաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ Ժական Խորհուր-  
դի աննապետ Սամուէլ Քամիգեան անտեսելով Առաջնորդի իրաւանգները բարւոք  
լուծում մը ալու իմաստ յարուցուած տեղական հարցերուն, անկարգ ընթացքի մէջ  
գտնուած է Յուլիս 9, 1971էն սկսեալ, նաեւ Առաջնորդի հետ իր ունեցած թղթակ-  
ցութեանց եւ հեռաձայնային խօսակցութեանց առեւանդներուն վրայ հիմնուելով,  
Քեմական Խորհուրդը որոշեց Սամուէլ Քամիգեանը դադրեցնել Ժական Խորհուրդի  
անդամութենէն:"

Քեմական Խորհուրդի այս որոշումը կը հաղորդենք նաեւ Ս. Յովաննէս Մկրտ-  
տիչ Եկեղեցւոյ Հովիւին եւ Ժական Խորհուրդին ի գործադրութիւն Յունուար  
80, 1972 թուականէն սկսեալ:

Սիրոյ ողջունիւ  
ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳՈՍԵՈՂՈՍ  
Առաջնորդ



Թիւ 28782  
Դեկտեմբեր 14, 1972

Արժանաշնորհ  
Տ. Կիւրեղ Զհոյ. Գալֆայեան  
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Նախագահ Ժապետ Խորհուրդի  
Մայամի.

Սիրելի Տէր Հայր,

Սաացած ենք Դեկտեմբեր 1 թուակիր 2եր նամակը եւ ներփակեալ արձա-  
նագրութիւնը Բացառիկ Ժապետ Խորհուրդին եւ անոր մագնակցող արատու ան-  
դամոց ցանկը:

Ըստ ներկայացուած արձանագրութեան, Մայամիի Ս. Յովհաննէս Մկրտիչ  
Եկեղեցւոյ Բացառիկ Ժապետ Խորհուրդը որոշած է որ Ժապետ Խորհուրդը  
հովուաւորուն մը գնէ 35-40 հազար առկար արժէքով եւ սոյն գումարը  
գոյացնելու համար արշալի յանձնախումբ մը պիտի կազմուի 1973 Յունվ-  
ամսուն մէջ գումարելի Տարեկան Ժապետ Խորհուրդին մէջ:

Մենք առարկութիւն չունինք եթէ հոյուաւորուն մը գնումին համար անհրա-  
ժեշտ գումարը գոյացուի մասնաւոր յանձնախումբի մը ֆանքերով, պայմանաւ  
սակայն որ որեւէ պատրաստի եւ աւանդ գումարներ չյատկացուին նոյն նպա-  
տակին համար:


Հաճեցէք մեզ տեղեկ պահել յատարիկայ Յունուարին գումարելի Տարեկան  
Ժապետ Խորհուրդին մէջ ընտրելի Արշալի Յանձնախումբին կազմի եւ հովուաւորուն  
գնումին համար նկատի առնուած ծրագիրի մասին:

Սիրոյ ողջունիւ

ԹԱՐԳԱՄ ԱՐՉԵԳՈՍԿԱՌԳՈՍ  
Առաջնորդ

Ս. ՅՈՒՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ  
Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Հեռախոս 371-4484



ST. JOHN THE BAPTIST  
Armenian Apostolic Church of Miami

Tel. 371-4484

120 N. E. 16TH STREET  
MIAMI, FLORIDA 33132

ՄԱԿԱՆ ԲԱՑԱՌԻԿ ԺՈՂՈՎԻՆ ԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՐՈՍԱՐՈՒԱԾ ՆՈՑԵՄԲԵՐ 17, 1972 Բ.

Միակամ բացառիկ ժողովը տեղի ունեցաւ եկեղեցւոյ սրահին մէջ, Ռեքրաթ  
երեկոյ ժամը 6-ին Նոյեմբեր 17, 1972ին:

Միակամ խորհուրդի անդամներէն ներկայ էին Տիկնայք, Չապէլ Բէյ,  
Զարուհի Գասպարեան եւ Դարոնայք Գառնիկ Զէյթունեան, Օնիկ Զիւլհանճեան,  
Պետրոս Ազարեան, Աւետիս Մասարանճեան, Յակոբ Մասրուպեան եւ Նշան Գալիկեան:

Նախագահ Արժ. Տ. Կիւրեղ Բհնյ. Գալմայեանի ժողովը բացաւ աղօթքով եւ  
հրահրեց Պրն. Գառնիկ Զէյթունեան ժողովը վարելու: Տիկ. Զարուհի Գասպարեանի  
ատենադպրութեամբ եւ ներկաներու հաւանութեամբ ու համամատուցեամբ  
ժողովը ունեցաւ իր ընթացքը, ըստ Եկեղեցւոյ Սրէնքներու Կանոնադրութեան:

Մասնաւոր շրջաբերականով հրահրուած էին բոլոր Մուխն տրատու  
անդամները, որոնց թիւն է մընչ այժմ 95: Ներկայ գտնուողներու թիւն էր 33,  
եւ ձեռամբարձ քուէարկութիւն տեղի ունեցաւ մեծամասնութեան հաւանութեամբ:

Սրակարգի բուն նիւթն էր, — շովետական մը գնեցու հարցը-Տեղի ունեցաւ  
թեր ու դէմ կարծիքներու փոխասակում եւ լուսարասութիւններ, որոց յետոյ  
ձեռամբարձ քուէարկութեամբ Միակամ խորհուրդիս արտօսութիւն տրուեցաւ  
վերջիշեալ Տուն գնել, սակայն 35,000 տուարէն 40,000 տուարի ոչ առելի  
ըլլալու որոշումով:

Այս առթիւ ալ — Դրամարշաւ — Թասձնախումբ մը կազմելու գործը  
յետաձգուեցաւ յառաջիկայ Յունուարի Երեւանի անդամներուն ժողովը վաղուցեա  
Տեր ՀՕր պահանջով ժամը 10:30ին:

*Տիկնայք*  
Տ. Կիւրեղ Բհնյ. Գալմայեան

Ատենադպր

Զարուհի Գասպարեան

*Լարմի Գասպարեան*


Ատենապետ

Գառնիկ Զէյթունեան

*Գառնիկ Զէյթունեան*

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ  
Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Հեռախոս 371-4484



ST. JOHN THE BAPTIST  
Armenian Apostolic Church of Miami

Tel. 371-4484

Դեկտեմբեր 1, 1972

120 N. E. 16TH STREET  
MIAMI, FLORIDA 33132

Գերաբաշնորհ  
Տ. Թորգոմ Արքեպս. Սանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի եւ,  
Կաթագահ թեմական խորհուրդի  
նիւ Շորթ, Ս.Ս.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Մեր այս գրութեան հետ ներփակ քերին սրբազնութեանը կը ճշտուինք ուրբաթ,  
նոյեմբեր 17, 1972ի գումարուած Եկեղեցւոյս Միակաս բացառիկ ժողովր հրաւիրա-  
գիրը, առենեգրութիւնը եւ մասնակցող անդամներուս անուանացասկը:

Սրբազան Հայր, սոյն ժողովին մէջ տրուած թեր ու դէմ կարծիքներու հետ  
միասին եղան հետեւեալ թեւադրութիւնները, որ Միակաս խորհուրդը եւ  
Տիւնաց Միութիւնը եւ եկեղեցւոյս հարակից մարմինները համագործակցելով  
իրարու հետ, վճարեն սոյն պարտամուրհակը, որ Եկեղեցւոյ Հովիւատուն մը  
գնելու պարագային:

Կուզենք կրկին յիշել, որ Միակաս խորհուրդը կը փափաքի մասնաւոր  
ցասձնախումբ մը կազմել դրամաքշաւի հասար:

Կանխայայտ շնորհակալութիւններով կսպասենք քերին դրական պատասխանին:

Ստաջեղով քերիս սրբազնութեան  
Կիւրեղ ԲՆՆՅ. Գալ Ճայեան Կաթագահ  
Միակաս ժողովր

Գաթագահ  
Միակաս ժողովր Առենեգր  
Զարուհի Գասբարեան

Միակաս ժողով Առենեգր  
Գաթագահ  
Կիւրեղ ԲՆՆՅ.

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ  
Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Հեռախոս 371-4484



ST. JOHN THE BAPTIST  
Armenian Apostolic Church of Miami

Tel. 371-4484

120 N. E. 16TH STREET  
MIAMI, FLORIDA 33132

November 8, 1972

SPECIAL PARISH ASSEMBLY

Special Parish Assembly to be held Friday, November 17, 1972 at 8:00 P.M. at the Church Hall 120 N.E. 16th Street, for the discussion and approval of the purchase of a Rectory for our Church. We urge all members to attend this brief meeting for this one purpose.

Pastor and Parish Council  
St. John The Baptist Armenian Church

Նոյեմբեր 8, 1972

ԾԽԱԿԱՆ\_ՄԱՍՆԱԿԻ\_ԺՈՂՈՎ

Ծխական Մասնակի ժողով տեղի պիտի ունենայ, Ուրբաթ, Նոյեմբեր 17, 1972 ժամը 8.00-ին Եկեղեցւոյ սրահին մէջ: Օրակարգ:—

Խորհրդակցել եւ վաւերացնել ՖՈՐ ՀՈՎԻԻԱՏՈՒՆ մը գնելու անհրաժեշտութեան վերաբերեալ:

Հովիւ եւ Ծխական Խորհուրդ  
Ս. Յովհաննէս Մկրտիչ Հայց. Եկեղեցւոյ

Ծիւղայնե Բայանիկ Ընդունելի  
 ԱՅ քաղաքի և Երևանի Կոմունիստական մասնաճյուղի:

- |                           |                          |
|---------------------------|--------------------------|
| 1. Յակոբ Կարապետյան       | 18. Եղիշտիկ Արարիկյան    |
| 2. Գեորգի Կարապետյան      | 19. Կարապետյան Արարիկյան |
| 3. Կարապետյան Կարապետյան  | 20. Կարապետյան Արարիկյան |
| 4. Կարապետյան Կարապետյան  | 21. Կարապետյան Արարիկյան |
| 5. Կարապետյան Կարապետյան  | 22. Կարապետյան Արարիկյան |
| 6. Կարապետյան Կարապետյան  | 23. Կարապետյան Արարիկյան |
| 7. Կարապետյան Կարապետյան  | 24. Կարապետյան Արարիկյան |
| 8. Կարապետյան Կարապետյան  | 25. Կարապետյան Արարիկյան |
| 9. Կարապետյան Կարապետյան  | 26. Կարապետյան Արարիկյան |
| 10. Կարապետյան Կարապետյան | 27. Կարապետյան Արարիկյան |
| 11. Կարապետյան Կարապետյան | 28. Կարապետյան Արարիկյան |
| 12. Կարապետյան Կարապետյան | 29. Կարապետյան Արարիկյան |
| 13. Կարապետյան Կարապետյան | 30. Կարապետյան Արարիկյան |
| 14. Կարապետյան Կարապետյան | 31. Կարապետյան Արարիկյան |
| 15. Կարապետյան Կարապետյան | 32. Կարապետյան Արարիկյան |
| 16. Կարապետյան Կարապետյան | 33. Կարապետյան Արարիկյան |
| 17. Կարապետյան Կարապետյան |                          |

Ընդ. 17, 1972

Ծխական Խորհուրդ  
Սք. Յով. Մկր. Հայս. Եկեղեցի  
120 ն. հ. 16րդ Փողոց  
Մայամի ֆլորիտա

Յունուար 13, 1972

Սիրելի Տիկ. Զ. Քէյ եւ Տեարք

Սուրբ Յովհաննէս Մկրտիչ Հայս. Եկեղեցւոյ քաղաքականութիւնը  
անարդար ու պիղծ գտնելով՝ կը հրաժարիմ Եկեղեցւոյ ծխական Խորհուրդէն:


Ցաւ ի սիրտ կուգամ յայտնել թէ՛ չեմ կարող հանդուրժել կարգ մը  
ստախօսութիւններու ու լարախաղերու, եւ չեմ փափարիր մեղսակից ըլլալ  
չարագործութիւններու:

Նախանձը նախապաշարած է կարգ մը անձերու միտքն ու հոգին ու չեն  
թողուր եկեղեցւոյ պայծառութեան ու յառաջդիմութեան արդար գործը  
չարունակել:

Խորապէս կը ցաւիմ ըսել թէ՛ Առաջնորդարանը անցեալին եւ ներկայիս  
երբէք չէ բերած իր արդար բարոյեական օգնութիւնը՝ գաղութիս ճշմարիտ  
անձերու գործունէութեանց, այլ գործիք դարձած է կարգ մը ~~խողարար~~,  
համբաւի հիւանդութենէ տառապող չարակամ խալիկներու՝ շնորհիւ ներկայ  
հայր Սուրբին:


Յար եւ նման օրինակ պատճառներով է որ կը հրաժարիմ Սուրբ Յով-  
հաննէս Մկրտիչ Հայս. Եկեղեցւոյ ծխական Խորհուրդէն:

Սամուել Թամիզեան  
1456 Սառլթ ուէսթ 13րդ Փողոց  
Մայամի ֆլորիտա, 33145

Չերդ անկեղծարար  
  
Սամուել Թամիզեան

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ  
Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Հեռախոս 371-4484



ST. JOHN THE BAPTIST  
Armenian Apostolic Church of Miami

Tel. 371-4484

28 Յունուար, 1972

120 N. E. 16TH STREET  
MIAMI, FLORIDA 33132

Գեր. Թորգոմ Արք. Մանուկեան,  
Առաջնորդ Հս. Ամերիկայի Հայոց  
Եւ Նախագահ Պատ. Թեմական Խորհուրդին.  
Նիւ Եորք

Գեր. Առաջնորդ Սրբազան,

Ներփակ կը գտնէք ծխական Խորհուրդի ատենապետին հրատարականը, որ ինքնին անոր դատապարտութիւնն է, անոր համար որ ամբողջութեամբ անոր ապրումներու ցոլացումն է: Ասկէ աւելի ինկածութեան փաստ կարելի չէ ունենալ: Միայն հրատարականն ընդունելը՝ անոր համար շնորհ պիտի ըլլայ:

Անոր տնօրինութիւնն Ձեզի յանձնելով մնամ՝

Պղնձնիւ Սիրոյ  
*Հմայեակ Ծ. Վրդ. Ինդոյեան*  
Հմայեակ Ծ. Վրդ. Ինդոյեան

Յ.Գ. - Ծխական Ժողովն յետաձգուելուն համար կարելի չեղաւ նոր հասկացողութիւն մ' ունենալ եկեղեցւոյ տարեդարձի հանդիսութեան յետաձգման մասին: Ծխական Ժողովը այս ամսու 27ին է: Ընտրութենէ անմիջապէս ետք, Ծխական Խորհուրդի դիւանի ընտրութիւնը պիտի կատարել տամ եւ փորձեմ նոր համաձայնութիւն մ' ունենալ, այլապէս անպիտի կատարուի Փետրուար 6ին: Կը սպասուի Ձեր հաղորդումին:

Անձկութեամբ կը սպասեմ վերջի նամակիս պատասխանին եւ ակնկալածս կարգադրութեան:

Նոյն

Քիւ 24178  
Դեկտ. 21, 1978

Արժանաշնորհ  
Տ. Կիւրեղ ԲՏՆՅ. Գալֆայեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ  
Հայաստանեայց Եկեղեցւոյ  
Մայմի.

Սիրելի Տէր Կիւրեղ,

Ի պատասխան Դեկտ. 10, 1978 թուակիր ձեր նամակին՝ կը տեղեկացնենք թէ որեւէ անպատեհութիւն չենք գտներ որ Գերշ. Տ. Սիոն Արք. Մանուկեանը հրաւիրէր ձեր եկեղեցւոյ օձման տարեդարձին: Սակայն Դպրութեան առաիճանի եւ Ուրարի արւշուրիւնը պէտք է յետաձգել յառաջիկային:

Սիրոյ ողջունիւ


ԹՈՐԳՈՄ ԱՐԵՆԳԵՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ



Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ  
Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Հեռախոս 371-4484

Արժ. Տ. Կիւրեղ Բհնյ. Գալֆայեան  
Հոգեւոր Հովիւ



ST. JOHN THE BAPTIST  
Armenian Apostolic Church of Miami

Tel. 371-4484

Rev. (Father) Guregh Kalfayan  
Pastor

120 N. E. 16TH STREET  
MIAMI, FLORIDA 33132

Դեկտեմբեր 10, 1973

Գերաշնորհ  
Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Նիւ Եորք, Ն.Ս.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Նկատի ունենալով Ձերին Սոյեմբեր 29, 1973ի թուակիր նամակը, որ կը հաղորդէք մեզի թէ Փետրուար 3ի շաբաթավերին ներկայ պիտի չկրնաք ըլլալ մեր եկեղեցւոյ Օծման տարեդարձին:

Սրբազան Հայր, կը ինդրենք Ձերին Սրբազնութենէյ, որ թոյլ տայիք մեզի Ձերին արտօնութեամբ եւ հրամանաւ մեր այս տարուան Օծման տարեդարձին հրաւիրէինք, մեր Խեմին նախկին Առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն Արքեպս. Մանուկեանը եւ Ձերին թոյլտուութեամբ նաեւ հրահանգէինք, որ Սրբազան Հայրը ընէր Կարգութեան աստիճանի եւ Բարարի տրւածութիւնը:

Սրբազան Հայր, Որդիական ջերմ գգացումներով եւ կանխայայտ շնորհակալութեամբ կ'սպասենք Ձերին դրական պատասխանին:

Մատչիմ Ձերդ Սրբազնութեան

Ի Ս. Արքեպս

*Guregh Kalfayan*  
Կիւրեղ Բհնյ. Գալֆայեան Հովիւ

- Կրօնական Կոմիտէի Սրբ. Արք.  
- Կրօնական Կոմիտէի Սրբ. Արք.  
Եւ Մատչիմ Ձերդ Սրբազնութեան

Քիւ 24061  
Յունիս 19, 1978

Արժանաշնորհ  
Տ. Կիւրեղ ԶԻՆՅ. Գալֆայեան  
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Ծկեղեցւոյ  
Մայամի, Ֆլորիտա.

Սիրելի Տէր Կիւրեղ,

Ատացած ենք Յունիս 7 թուակիր Ձեր նամակը, որով կը խնդրէք  
որ Մարք Քաղէոսեանի ասնք Սկաուտական Արծիւ պատուանշանը:

Առանձին ծրարով Ձեզի կը դրկենք Սկաուտական գրքոյկներէն,  
յանձնարարելով որ Մարք Քաղէոսեան ուսումնասիրէ զանոնք եւ  
Հովիւին ու ծխական Խորհուրդին ներկայութեան քննութիւն ապ:


Նամակով մը մեզի կը ներկայացնէք այդ քննութեան արդիւնքը,  
որպէսզի նկատի առնենք Ձեր վերոյիշեալ խնդրանքը:

Սիրոյ ողջունելի

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ  
Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Հեռախոս 371-4484



ST. JOHN THE BAPTIST  
Armenian Apostolic Church of Miami

Tel. 371-4484

120 N. E. 16TH STREET  
MIAMI, FLORIDA 33132

Յունիս 7, 1973

Գերաշնորհ  
Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Նիւ Եորք, Ն.Յ.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Եկեղեցւոյս անդամներէն Տիար Նշան Թաղէոսեանի մանչր՝ Մարք Թաղէոսեան կը պատկանի տեղւոյս սկառուտական խումբի մը: Ան իր երկար տարիներու ծառայութիւնը բերած է այս խումբին: Ան նաեւ անցեալին եղած է օրինակելի, բարի ու աշխատասէր աշակերտ մը Կիրակնորեայ Կարժարանին: Կերջերս ան իր բացառիկ մէկ ծառայութիւնը բերաւ իր պատանի խումբի տղոց հետ միասին գրեթէ մէկ ամիս ծառայեց եկեղեցւոյս եւ սրահիս շրջաբակին մաքարութիւնը ընելու, խոտերը կտրելու, սրահին ու եկեղեցւոյ մաքրութիւնը ընելու:


Սրբազան Հայր, կը խնդրենք ու կը փափաքինք Ձերին Սրբազնութենէն, որ իրեն շնորհէք Առաջնորդարանի յատուկ սկառուտական Արծիւի շքանշանով:

Կանխայայտ շնորհակալութեամբ կսպասենք Ձերին դրական պատասխանին:

Մատթիմ Ձերդ Սրբազնութեան

ի Սուրբ Կեղոյս  
*Կրկնեղ Երջւյ. Գալֆայեան Հովիւ*  
Ս. Յովհ. Սկրտիչ Հայց. Եկեղեցւոյ

- ակաւաւի Գրեթե ԶՊԻ  
- քեւ Բ. Եւե ԳՊԻ Ե ԿԵԿ



«Մեք քարոզեցուք զիսաչելեալն Քրիստոս...» 30 Ապրիլ, 1973

Գեր. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան,  
Առաջնորդ Հս. Ամերիկայի Հայոց,  
և և Նախագահ Պատ. Թեմական Խորհուրդին  
ու Թեմական Պատգամաւորական Ժողովին

Մայամի

Գերաշնորհ Առաջնորդ Սրբազան և Պատ. Անդամներ . . . ,

Երէկ գիշեր հեռածայնով Մայամիի Եկեղեցիի Թեմական պատգամաւորի ընտրութեան սխալն Առաջնորդ Սրբազանի հաղորդելէ ետքն ալ՝ չկրցայ հանդարտիլ, որովհետեւ ասիկա ինծի համար, ԿԱՆՈՆԻ ՈՒՂԻՂ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ է. կանոնի անտեսումը ոչ մէկ կերով կարելի է արդարացնել, քանի՜ որ ասիկա անտեսում պիտի ըլլայ Հայ Եկեղեցւոյ վերին հեղինակութեան, որ Կանոնադրութիւնը վաւերացնողն է, այս Թեմական Թէ Եկեղեցական իշխանութեան հարեւանցի զործունէութեան, որուն կարելի չէ հանդուրժել որեւէ ձեւով:

Բոլորդ ալ ծանօթ պէտք ըլլաք իմ բծախնդիր նախածախնդրութեանս կանոնական զանցադրութիւններու նկատմամբ, ժոանց հաշուելու անարժանութիւնները:

Արդ, Կանոնադրութեան 17-րդ Զօդուածի տրամադրութեան հակառակ եղած է Մայամիի Եկեղեցիին Թեմ. պատգամաւորի այս սարւան երկրորդ ընտրութիւնն ալ, որովհետեւ. - Առաջին, Եկեղեցին այժմ ունի 100է աւելի (142) տրատու անդամներ, որոնցմէ մի միայն 33 անդամները ներկայ եղած են ժողովին:


Երկրորդ, այս ներկայ եղողներուն 2/3-ը ունէ չէ առած ժ. Յովհաննէսեանը, այլ մի միայն 17 քուէ ստացած է, ինչ որ չի գոհացներ կանոնի տրամադրութիւնը:

Այսպիսի հակականոնական ընտրութիւն մը կարելի է ծանչնալ ՄԻ ՄԻԱՅՆ ԿԱՆՈՆԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՄԲ, ԱՅԼԱՊԷՍ ԱՅՍՊԻՍԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԸ ԺԱՆԱԶՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՐԱԿԵԼՈՒ ԲԱՌ ԶՈՒՆԻՄ, քանի որ այսպիսի կամայականութիւններն ու անյիշաջարութիւններն են, որ կը քաջալերեն անկանոնութիւնները, կը ստուերոտեն Հայց. Եկեղեցւոյ վսեմութիւնն ու Հայ Եկեղեցականութեան վարկն ու հեղինականութիւնը, և պատճառ կը դառնան աններելի անկարգաճեղճութեան:

Առանց այլայլումի, շատ դիւրին է այս անկանոնութիւնը դարմանել, պարզապէս հրաժանագլուխով, որ կանոնական ընտրութիւն կատարուի յաջորդ Եիսական ժողովին և եղած ընտրութիւնը ծանչնալ զալ տարի Թեմ. Պատգամաւորական ժողովին Յ տարւան համար:

Այս առթիւ կարելի է ծուխին ալ արդարութիւնը ներկայ 2 պատգամաւորի ընտրութիւններու արտօնելով:

Այս պարագաները ինծի համար կանոնական սկզբունքային լուրջ հարցեր են, որոնց հանդէպ կարելի չէ անտարբեր մնալ: Իմ միակ դիտումս է ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՇԻՏԱԿ ԳՈՐ-



«Մեք քարոզեցուք զխաչելեալն Բրիտանա...»

**ԾԱԴՐՈՒՄԸ:** Այս բողոքագիրը անոր փաստաթուղթն է:

Սրբազան, կանոնական ընտրութեան այս սխալը Ձեր, Թեմական Խորհուրդին, կամ ի հարկին, Թեմ. Պատգամաւորական Ժողովի լուրջ նկատման բերելով մնամ

Տիրութանդ ջերմ սիրոյ ողջունիւ  
Հմայեակ Ծ. Վարդ. Ինդոյեան

**Յ. Գ.** - Այս բողոքագիրը կանոնադրութեան 20-րդ յօդուածի համեմատ է, որովհետեւ թուականէս երեք օր առաջ փորձած եմ հաղորդակցիլ առաջնորդի հետ:

Անշուշտ փափարեւի էր որ անձամբ ներկայացնէի այս անկանոնութիւնը, բայց անկարելի է. Առաջնորդ Սրբ-ի կարգադրութեամբ Հիւսիսըն պիտի ըլլամ Մայիս 6ին: Ուստի, կանոնական է, որ Մայամիի եկեղեցիին պատգամաւորի ներկայացման ատեն Թեմ. Պատգամաւորներ զիտնան այս պարագան, նոյնիսկ եթէ աննկատ թողունք:

*Handwritten signature*

Քիւ 24407  
Նոյեմբեր 4, 1974

Արժանաշնորհ  
Տ. Կիւրեղ ԲՏՆՅ. Գալֆայեան  
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Նախագահ Ծխական Խորհուրդի  
Մայամի.

Սիրելի Տէր Կիւրեղ,

Ուրախութեամբ տեղեկացանք որ Եկեղեցւոյդ Երէց Տիկնանց Միութեան կազմութեան 25-ամեակը պիտի նշուի Ճարւոյս Նոյեմբեր 11ին:

Միացեալ Նահանգաց մէջ Հայց. Եկեղեցւոյ կողքին կազմուած գանազան միութիւններու շարքին իւրայատուկ տեղ մը կը զբաւեն Տիկնանց Միութիւնները՝ որոնք գնահատելի ծառայութիւններ կը մատուցանեն մեր ծուխերուն, թէ քարոյական, մշակութային, եւ թէ նիւթական գեանի վրայ: Եւ մենք ուրախ ենք որ Մայամիի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդը որոշած է մասնաւոր հանդիսութեամբ մը իր երախտագիտութիւնը յայտնել Եկեղեցւոյ Երէց Տիկնանց Միութեան՝ քառորդ դարու ընթացքին անոր կատարած եկեղեցանուէր գործունէութեան համար:

Այս ուրախ առթիւ կ'օրհնենք Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ Երէց Տիկնանց Միութեան բոլոր անդամուհիները, անոնց կը մաղթենք գործունէութեան առաւել խանդ ու առաւել եռանդ, եւ կ'աղօթենք որ մեր Տէրը իր մշտական իովանիին ներքեւ պահէ զանոնք եւ անոնց պարագաները:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՅ ԱՐՔԵԳԻՍԿՈԳՈՍ  
Առաջնորդ

**Ս. ՅՈՒՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ**

Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի



**ST. JOHN THE BAPTIST**  
Armenian Apostolic Church of Miami

Արժ. Տ. Կիւրեղ Բնյ. Գալֆայեան  
Հոգեւոր Հովիւ Հեռախոս 371-4484

Rev. (Father) Guregh Kalfayan  
Pastor Tel. 371-4484

Հոկտեմբեր 8, 1974

Գերաշնորհ  
Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Նիւ Եորք, Մ. Ե.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Եկեղեցւոյս Երեց Տիկնանց Միութեան կազմութեան Ձեռնհինգամեայ  
հանդիսութիւնը առդի պիտի ունենայ Կիրակի, Մոյեմբեր 11, 1974ին:

Սրբազան Հայր, յանուն Թիպական Թորհուրդիս եւ Եկեղեցւոյ Տիկնանց  
Միութեան վարչութեան եւ անդամներուն, այս հանդիսութեան առիթով, կը  
խնդրենք Ձերին Սրբազնութենէն որ, Միութեանս համար ապիք Օրհնութեան  
Դիր մը, եւ եթէ այս հանդիսութեան յարմար զարդակոծակներ ունինք, եւ  
կարելի է արամարդրել քսան հինգ հատ, բաշխելու համար Միութեան բոլոր  
գործոն անդամուհիներուն համար:

Սրբազան Հայր, եզրափակելէ առաջ մեր այս նամակին պարունակութիւնը,  
կուզանք որդիական շեքմ գգացումներով յայտնել մեր երախտագիտութիւնը,  
եւ շնորհակալութիւնը, եւ կսպասենք Ձերին դրական պատասխանին:

Մատչիմ Ձերդ Սրբազնութեան  
Սուրբ Կորնիս  
Կիւրեղ Բնյ. Գալֆայեան Հոգեւոր Հովիւ  
Ս. Յովհ. Մկրտիչ Հայոց Եկեղեցւոյ

*Եր. Կ. Գալֆայեան*

**Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ**

Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Արժ. Տ. ԿԻԼԻՆԴ ԲՏՆՅ. Գալֆայան  
Հոգևոր Հովիւ Հեռախոս 371-4484



**ST. JOHN THE BAPTIST**  
Armenian Apostolic Church of Miami

Rev. (Father) Guregh Kalfayan  
Pastor Tel. 371-4484

Հոկտեմբեր 8, 1974

Գերաշնորհ  
Տ. Քորզում Արքեպ. Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Սիւ Յորք, Մ. Ե.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Եկեղեցւոյս Երեց Տիկանց Միութեան կազմութեան Բան հիսգամեայ  
հանդիսութիւնը առիթ պիտի ունենայ Կիրակի, Սոյեմբեր 11, 1974ին:

Սրբազան Հայր, յանուն Թիական Խորհուրդիս եւ եկեղեցւոյ Տիկանց  
Միութեան վարչութեան եւ անդամներուն, այս հանդիսութեան առիթով, կը  
խնդրենք Ձերին Սրբազնութենէն որ, Միութեանս համար օայտիք Օրհնութեան  
Գիր մը, եւ եթէ այս հանդիսութեան յարմար գորակոծակներ ունինք, եւ  
կարելի է արամարդրել քանի հինգ հատ, բաշխելու համար Միութեան բոլոր  
գործոն անդամուհիներուն համար:

Սրբազան Հայր, եզրափակելէ առաջ մեր այս նամակին պարունակութիւնը,  
կուզանք որդիական ջերմ զգացումներով յայտնել մեր երախտագիտութիւնը,  
եւ շնորհակալութիւնը, եւ կապտենք Ձերին գրական պատասխանին:

Մանչիմ Չերդ Սրբազնութեան  
Սուրբ Ստեփան  
Կիլիկի Գրք. Գալֆայան Հոգևոր Հովիւ  
Ս. Յովհ. Մկրտիչ Հայոց Եկեղեցւոյ

*[Handwritten signature]*



Քիւ 24586  
Յուլիս 8, 1975

Արժանաշնորհ  
Տ. Կիւրեղ Ընչ. Գալֆայեան  
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Եսթագան Երեւան Խորհուրդի  
Մայամի.

Սիրելի Տէր Կիւրեղ,

Ծրուադէմէն մեր վերադարձին մեր գրասեղանին վրայ գտանք  
Յունիս 16, 1975 թուակիր ձեր նամակը:

Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան վեցերորդ  
տարեկան մարզախաղերուն առթիւ, որոնք տեղի պիտի ունենան տար-  
ւոյս Օգոստոս 20 - Սեպտեմբեր 1, Մայամիի մէջ, որեւէ անպա-  
տեհութիւն չենք տեսներ որ եկեղեցական արարողութիւնները կա-  
տարուին պանդոկի սրահին մէջ, որքան ատեն որ անոնք տեղի կ'ու-  
նենան մեր եկեղեցւոյ կանոններուն համաձայն: Վասն ենք որ  
կարգադիր Յանձնախումբը հոգ պիտի տանի որ երիտասարդները ա-  
րարողութեանց մասնակցին պաշտօնօրէն եւ կարգապահութեամբ:


Կը մաղթենք որ այս առթիւ կազմուած ծրագրումներն ու տար-  
ւած աշխատանքները արժանազրեն ամբողջական յաջողութիւն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԵՅԳԻՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ  
Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

ST. JOHN THE BAPTIST  
Armenian Apostolic Church of Miami



Արժ. Տ. Կիւրեղ Բնյ. Գալֆայեան  
Հոգեւոր Հովիւ Հեռախօս 371-4484

Rev. (Father) Guregh Kalfayan  
Pastor Tel. 371-4484

Յուլիս 16, 1975

Գերաշնորհ  
Տ. Թորգոմ Արթուս. Մանուկեան  
Առաջնորդ Ժայռո Ամերիկայի  
Սիւ Շորթ, Ն.Շ.

Գերաշնորհ Թորգոմ Հայր.

Մայամի, Ս. Յովհաննէս Մկրտիչ Հայր. Եկեղեցւոյ Էյ. Սի. Ուոյ, Օյ.  
Էն. իր աշխատանքները կը ամփոփուի լաւագոյն կերպով յաջողութեամբ ամբողջատեսչու  
Միութեան մեծերորդ արեւելեան մարզադաշտերը որ, տեղի պիտի ունենայ յառաջիկայ  
Օգոստոս 29, 30, 31, եւ Սեպտեմբեր 2, 1975ին Մայամի մէջ:

Ոչս առթիւ, Միութեան վարչութիւնը Տէր Ներսէս Բնյ. ձեւեմեակի հետ  
խորհրդակցութեամբ որոշած են, Գանթալիս մէջ կատարել Եկեղեցւոյ Արարողութիւնները,  
որպէսզի, որութիւն բնծայել բոլոր երիտասարդներուն որ, իրենց մասնակցութիւնը  
կը բերեն այս մարզակազերուն:

Արթուս Հայր, եթէ այս կարգադրութիւնը ընդունելի է Ձերին Արթուսութեան  
եւ Ձերին Արթուսութիւնը համաձայն է այսպիս կարգադրութեան, հաճեցէք մեզ  
տեղեակ պահել որպէսզի, մեզ համար կարել ուլլայ կանկաւ տեղեակ պահել մեր  
Համայնքը ու առ այդ թե՛ մեր կարգադրութիւնը:

Արթուս Հայր, կեօնաւայտ շնորհակալութիւններով կապուանք Ձերին  
որակեան պատուով ին:

Մասնակցով Ձերդ Արթուսութեան  
Ի Ս. Արթոմ  
*[Handwritten Signature]*  
Կիւրեղ Բնյ. Գալֆայեան Հովիւ  
Ս. Յովհ. Մկրտիչ Հայր. Եկեղեցւոյ

**Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ**

Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Արժ. Տ. Կիւրեղ ԲՆՆՅ. Գալֆայեան  
Հոգեւոր Հովիւ Հեռախօս 371-4484



**ST. JOHN THE BAPTIST**  
Armenian Apostolic Church of Miami

Rev. (Father) Guregh Kalfayan  
Pastor Tel. 371-4484

Յուլիս 16, 1975

Գերաշնորհ  
Տ. Պրքազմ Արքեպս. Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Միւ Շորք, Ն.Շ.

Գերաշնորհ Որբազան Հայր,

Մայամիի, Ս. Յովհաննէս Մկրտիչ Հայց. Եկեղեցւոյ Էյ. Մի. Ուայ, Օյ. Ըն. իր աշխատանքները կը տանի լաւագոյն կերպով յաջողութեամբ ամբողջանելու Միութեան Վեներորդ տարեկան ժողովադէրոյ որ, տեղի պիտի ունենայ յառաջիկայ Օգոստոս 29, 30, 31, եւ Սեպտեմբեր 1, 1975ին Մայամի մէջ:

Այս առիւթ, Միութեան Վարչութիւնով Տէր Ներսէս ԲՆՆՅ, ժեպէմեանի հետ խորհրդակցաբար որոշած են, Գանթակիս մէջ կատարել Եկեղեցւոյ Արարողութիւնները, որպէսզի, որութիւն ընծայել թուր Երիտասարդներուն որ, իրենց մասնակցութիւնը կը բերեն այս ժողովադէրուն:

Սրբազան Հայր, եթէ այս կարգադրութիւնը ուղղունն է Ձերին Սրբազանութեան եւ Ձերին Սրբազանութիւնը համախա է այսպիս կարգադրութեան, հաճեցէք մեզ տեղեակ պահել որպէսզի, մեզ համար կարել յլլայ կանկաւ տեղեակ պահել մեր Համայնքը ու առ առ ընել մեր կարգադրութիւնը:

Սրբազան Հայր, կանխաւայտ շնորհակալութիւններով կսպասենք Ձերին որական պատասխանին:

Մասջելով Ձերդ Սրբազանութեան  
հ. Ս. Ազոյն  
*Guregh Kalfayan*  
Կիւրեղ ԲՆՆՅ. Գալֆայեան Հովիւ  
Ս. Յովհ. Մկրտիչ Հայց. Եկեղեցւոյ

Քիւ 24955

Յուլիս 30, 1976

Մեծայարգ  
Տիար Տէննի Արթուր-Յիւլիան  
Ասենապետ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
ժխական Խորհուրդի  
Մայմի.

Յարգելի Տիար Արթուր-Յիւլիան,

Ասացած ենք Յուլիս 23, 1976 թուակիր ձեր նամակը, որով փոփոք կը յայտնէր Լանջախաչ մը ունենալ՝ պատշաճ հանդիճութեամբ մը, Օգոստոս 15ին, նուիրելու համար Եկեղեցւոյդ Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Կիւրեղ ԷՏՆԵ. Գալֆայեանի, որուն Լանջախաչ կրելու իրաւունք շնորհած էինք Մարտ 25, 1976 թուակիր մեր նամակով:

Կը գնահատենք ժխական Խորհուրդիդ այս որոշումը: Առանձին ծրարով ձեր հասցէին կը դրկենք էջմիածնի մէջ պատրաստուած Լանջախաչ մը, առանց շղթայի, եւ որուն զինն է 150 աղլար:

Խորհուրդիդ ընդ որ անդամներուն կը մաղթենք առաւել ատղջութիւն եւ եկեղեցանուէր ու ազգանուէր ձեր գործերուն նոր յաջողութիւններ:

Աիրոյ ողջունիւ

ՔՐԸԳՈՄ ԱՐԾԵԳԻՍԿՈԳՈՍ  
Առաջնորդ

**Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ**  
Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Արժ. Տ. Կիւրեղ Բհնյ. Գալֆայեան  
Հոգեւոր Հովիւ Հեռախօս 371-4484



**ST. JOHN THE BAPTIST**  
Armenian Apostolic Church of Miami

Rev. (Father) Guregh Kalfayan  
Pastor Tel. 371-4484

Յուլիս 23, 1976

Գերաշնորհ  
Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան  
Բարեխնամ Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի  
Արեւելեան Թեմին  
Նիւ Եորք, Նիւ Եորք,

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Համաձայն Ձեր Մարտ 1976-ի պաշտօնագրութեան, որուն մէջ Ձերդ Սրբազնութիւնը բարեհաճ կարգադրութեամբ կը շնորհէր Լանջախաչ կրելու արտօնութիւնը Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժանապատիւ Տ. Կիւրեղ Բհնյ. Գալֆայեանին, առ ի գնահատան եւ կարծաւորութիւն իր երկար տարիներու ծառայութեանը մեր եւ ուրիշ համայնքներու մէջ:

Այսուկուզանք հաղորդել Ձերդ Սրբազնութեանը թէ՛ ծիական խորհուրդը իր Չորեքշաբթի, Յուլիս 21, 1976 նիստին մէջ որոշում գոյացուց դիմելու Ձերին Սրբազնութեանը, որպէսզի բարեհաճութիւնը ունենայիք մեզի դրկելու Լանջախաչ մը, որպէսզի մեր ծիական խորհուրդը իր ծրագրած ճաշկերոյթին առիթով, որ Ս. Աստուածածնայ Տօնին օրը Կիրակի, Օգոստոս 15, 1976-ին է:

Այդ առիթով ծիական խորհուրդը պատշաճ հանդիսութեամբ կուզէր յանձնել Լանջախաչը Եկեղեցւոյս Հոգեւոր Հովիւ, Տ. Կիւրեղ Բհնյ. Գալֆայեանին:

Սրբազան Հայր, հաճեցէք անյապաղ հաղորդել մեզի վերոյիշեալ Լանջախաչին նիւթական արժէքը, որ ըստ այնմ փութացնենք այդ ծախսը:

Կանխայայտ շնորհակալութեամբ եւ որդիական ջերմ զգացումներով կուզանք յայտնել Ձերդ Սրբազնութեանը մեր գնահատանքի զգացումը եւ կսպասենք Ձերդ Սրբազնութեանը դրական պատասխանին:

Մնամք ի համբոյր Ձերդ Սրբազնութեանը  
Սուրբ Աջոյն  
Ի Դիմաց Ս. Յովհաննէս Սկրտիչ Հայց. Եկեղեցւոյ  
Ծիական խորհուրդի

Հայերէնի Ատենադպիր  
Օհան Ապագլեան

Ատենապետ  
Daniel Joseph Gulian  
Տէնիսի Սաբահ-Կիւլեան

Քիւ 24966

Հոկտեմբեր 15, 1976

Արժանաշնորհ  
Տ. Կիւրեղ Էհնյ. Գալֆայեան  
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Նախագահ ժխական Խորհուրդի  
Մայամի.

Սիրելի Տէր Կիւրեղ,

Առաջած ենք Սեպտեմբեր 18, 1976 թուակիր ձեր նամակը, որով կը հրաւիրէք մեզ Եկեղեցւոյ՞՞՞ օժման 24րդ արեղարձի հանդիսութեան, որ տեղի պիտի ունենայ Կիրակի, Փետրուար 6, 1977ին:

Սիրով կ'ընդունինք ձեր հրաւերը եւ 1977 Փետրուար 6ի շաբաթավերջը կը վերապահենք Մայամիի մեր համայնքի այցելութեան:

Իսկ դպրութեան աստիճաններու եւ ուրարի աուչութեան աորնչութեամբ կը դրկենք Սարկաւազի Ուղեցոյցը գիրքէն օրինակ մը, որուն մէջէն ձեռնադրուելիք անձերը պէտք է սորվին եւ կարենան կարդալ ժամերգութեանց ընթացքին սարկաւազի բաժինները:


Ուրբաթ, Փետրուար 4ին անձնապէս հանդիպում պիտի ունենանք Գետրոս Ագարեանի եւ ժորժ Գալֆայեանի հետ եւ իրենց պատրաստ պէտք է ըլլան քննութեան մը:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՅ ԱՐԷՅԻՍԵՆՈՂՈՍ  
Առաջնորդ

**Ս. ՅՈՒՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ**  
Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Արժ. Տ. Կիւրեղ Բնյ. Գալֆայեան  
Հոգեւոր Հովիւ Հեռախոս 371-4484



**ST. JOHN THE BAPTIST**  
Armenian Apostolic Church of Miami

Rev. (Father) Guregh Kalfayan  
Pastor Tel. 371-4484

205

Սեպտեմբեր 18, 1976

Գերաշնորհ  
Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Նիւ Եորք, Ն.Յ.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Եկեղեցւոյս Օծման Քսան-չորրորդ տարեդարձի հանդիսաւոր տօնա-  
կատարութիւնը տեղի պիտի ունենայ Կիրակի, Փետրուար 6, 1977-ին:

Սրբազան Հայր, այս հանդիսաւոր տօնակատարութեան առիթով կր հրաւիրենք  
Ձերին Սրբազնութիւնը որ, Սուրբ Պատարագ մատուցանէք եւ Սախազահէք Օրուան  
յատուկ եւ ի Պատիւ Ձերին Սրբազնութեան ճաշկերոյթին:

Սրբազան Հայր, Ձերին այս այցելութեան միջոցին կր խնդրենք Ձեզմէ որ,  
դպրութեան Աստիճան եւ Ուրար տալիք Եկեղեցւոյս երկու հաւատարիմ  
ու անկեղծ ծառայող անհատներու Պրն. Պետրոս Ազարեանին եւ Պրն. Ժօրժ  
Գալֆայեանին, որ երկար տարիներէ ի վեր անոնք հաւատարմօրէն կր ըզրեն  
իրենց մասնակցութիւնը Եկեղեցւոյ ծառայութեանց մէջ:

Արդ, եզրափակելէ առաջ մեր այս նամակին պարունակութիւնը, կուզանք  
որդիական ջերմ գգացումներով յայտնել Ձերին Սրբազնութեանը մեր շնորհա-  
կալութիւնը եւ կսպասենք Ձերին դրական պատասխանին:

Մատչելով Ձերը Սրբազնութեան  
ի Սուրբ Աջոյ  
Կիւրեղ Բնյ. Գալֆայեան  
Կիւրեղ Բնյ. Գալֆայեան, Հոգեւոր Հովիւ  
Մայամիի, Ս. Յովհ. Մկրտիչ Հայց. Եկեղեցւոյ

Քիւ 25014  
Դեկտեմբեր 7, 1976

Արժանաշնորհ  
Տ. Պիւրեղ Բհնյ. Քալֆայեան  
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Նախագահ Եիսկան Խորհուրդի  
Մայամի.

Սիրելի Տէր Պիւրեղ,

Ստացած ենք Դեկտեմբեր 1, 1976 թուակիր ձեր նամակը, որուն ի պատասխան համեցէք ներքակ զանել Տիկ. Պիւրիզար Յէնէզեանի մեր կողմէ արուած Օրհնութեան եւ Գրքահատանքի գիրը:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԵՆԳԻՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ



Գ ի Ր

**ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ**

**ԱՌ ՏՐԿԻՆ ԵՒ ԻՒՐԱՐԱՐ ՆՇՆՇՁԵԱՆ**

Ուրախութեամբ տեղեկացանք որ Մայամիի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ Հոգեւորն Հովիւն ու Ժիական Խորհուրդը որոշած են վայել շուքով նշել ձեր ծննդեան 70րդ տարեդարձը՝ որպէս վարձատրութեան արտայայտութիւն ձեր երկարամեայ ծառայութեան:

Մենք եւս կը հաստատենք որ մօտ 80 տարիներ ձեր աշխատանքն ու վաստակը ի սպաս դրած էք Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ պայծառութեան եւ յառաջդիմութեան՝ անդամակցելով եւ գործօն մասնակցութիւն բերելով Եկեղեցւոյ հովանիին ներքեւ գործող կազմակերպութեանց:


Որպէս Առաջնորդ Ամերիկայի Հայոց մեր զնահատանքը կը յայտնենք ձեզի, կ'օրհնենք ձեզ ու քաջաողջ եւ երկար կեանք կը մաղթենք ձեզի: Կ'աղօթենք որ ձեր բարի օրինակին հետեւին ձեր զաւակները եւ թոռները, միշտ շէն պահելու համար Հայաստանեայց Եկեղեցին, Աստուծոյ փառքին եւ մեր ժողովուրդի հոգեւոր ու մշակութային կեանքի բարգաւաճումին համար:

Սիրոյ ողջունիւ

**ՅՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈՂՈՍ**  
Առաջնորդ

*Guregh*

**Ս. ՅՈՒՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ**  
Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի



**ST. JOHN THE BAPTIST**  
Armenian Apostolic Church of Miami

Արժ. Տ. Կիւրեղ Բնյ. Գալֆայեան  
Հոգեւոր Հովիւ Հեռախոս 371-4484

Rev. (Father) Guregh Kalfayan  
Pastor Tel. 371-4484

Դեկտեմբեր 1, 1976

Գերաշնորհ  
Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Սիւ Եորք, Մ.Յ.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Յանուն ծիսական Խորհուրդի եւ Եկեղեցւոյս Երէց Տիկնանց Միութեան անդամներուն փափաքին ընդառաջելով կը խնդրենք Ձերին Սրբազնութենէն, որ Եկեղեցւոյս իր երկարամեայ անձնուիրաբար ծառայութիւնը բեռ ծ Տիկ. Կիւրիլզար Նէնէգեանին ծննդեան 70-ամեակի հանդիսաւոր հաւաքոյթին առիթով, Օրհնութեան Գիր մը ուղարկէք առ ի գնահատութիւն իր անխոնջ աշխատանքին, որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, Դեկտեմբեր 18, 1976-ին Եկեղեցւոյ սրահին մէջ:

Տիկ. Նէնէգեան եղած է Կարչական եւ զործոն անդամ Եկեղեցւոյս Երէց Տիկնանց Միութեան 1949-էն ի վեր: Ան իր աշխատանքը բերած գնահատան յանձնախումբերու մէջ. ինչպէ՛ս մասի պատրաստութեան, Եկեղեցւոյ մաքրութեան, իր հաւաքոյքներու առիթով պատրաստած համեղ ճաշերով, որը համայնքին գնահատանքին արժանացած է եւ եղած է եկեղեցասէր ու բարեպաշտ հաւատացեալ մը:

Արդ կը խնդրենք Ձերին Սրբազնութենէն որպէսզի, մեծապէս գնահատած ոլլւանք զինքը մանաւանդ Ձեր Օրհնութեան եւ Գնահատանքին զիրով:

Մատչելով Ձերդ Սրբազնութեան  
ի Սուրբ Արդոն  
*Guregh Kalfayan*  
Կիւրեղ Բնյ. Գալֆայեան Հոգ. Հովիւ,  
Ս. Յովհ. Մկրտիչ Հայոց Եկեղեցւոյ  
Մայամի, Ֆլորիտայ

Ռ- 21171

Նոյեմբեր 29, 1975

Արժանաշնորհ  
Տ. Կիւրեղ ԲՆՅ. Գալֆայեան  
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Նախագահ Ծխական Խորհուրդի  
Մայամի.

Սիրելի Տէր Կիւրեղ,

Առաջած ենք Նոյեմբեր 26 թուակիր 2եր նամակը:

Կը ցաւինք որ ամբողջ Փետրուար ամսուան շաբաթավերջերը նախապէս  
կարգադրուած ժամադրութիւններով գրաւուած են, եւ պիտի չկարենանք  
Մայամիի մեր համալսարան մէջ գտնուիլ Փետրուար երեքի շաբաթավերջը:

Դպրաց դասի անդամներու աստիճանի տըւչութեան մասին եւս կար-  
գադրութիւն կ'ընենք յաջորդ մեր այցելութեան:

Սիրոյ ողջունիւ

ՅՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

**Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ**  
Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Հեռախոս 371-4484

Արժ. Տ. Կիւրեղ Բնյ. Գալֆայեան  
Հոգեւոր Հովիւ



**ST. JOHN THE BAPTIST**  
**Armenian Apostolic Church of Miami**

Tel. 371-4484

Rev. (Father) Guregh Kalfayan  
Pastor

120 N. E. 16TH STREET  
MIAMI, FLORIDA 33132

Նոյեմբեր 26, 1978

Գերաշնորհ  
Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի եւ  
Նախագահ Թեմական Խորհուրդի  
Նիւ Եորք, Ն.Յ.


Գերաշնորհ Արքազան Հայր,

Յանուն ծիսական Խորհուրդի անդամներուն կը հրահրենք Ձերին  
Արքազնութիւնը Ս. Պատարագ մատուցանելու եւ նախագահելու Սկեղեցւոյս  
Օծման Քսաներկրորդ տարեդարձի ճաշկերոյթին, որ տեղի պիտի ունենայ  
Կիրակի, Փետրուար 3, 1974:

Արքազան Հայր, ծիսական Խորհուրդի անդամները կը ինդրեն Ձերին  
Արքազնութենէն, որ Ձեր այս այցելութեան միջոցին՝ Կարութեան Աստիճան  
տայիք Սկեղեցւոյս երկար տարիներու իրենց ծառայութիւնը բերած երեք  
անձերուն. անոնք են՝ Տիար Պետրոս Ազարեան, Տիար Յովհաննէս Թանմիզեան եւ  
Պրն. Ժորժ Գալֆայեան: Եւ Աւրար շնորհէիք Տիար Պետրոս Ազարեանին եւ  
Տիար Յովհաննէս Թանմիզեանին:

Արքազան Հայր, կանխայայտ շնորհակալութիւններով եւ որդիական ջերմ  
զգացումներով կսպասենք Ձերին դրական պատասխանին:

Մատչիմ Ձերը Արքազնութեան

ի Ս. Արքեպս.  
  
Կիւրեղ Բնյ. Գալֆայեան Հովիւ

Նոյեմբեր 29, 1978

Արժանաշնորհ  
Տ. Կիւրեղ ԲՆՅ. Գալֆայեան  
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Մայամի, Ֆլորիտա.

Սիրելի Տէր Հայր,

Առաջնորդ Արքայան Հայրը ստացած է Նոյեմբեր 28 թուակիր 2եր  
նամակը: Ներփակ պիտի գտնէք տեղեկագրի տպագրուած օրինակները:

Նորին Արքայանութիւնը օրինաւոր կը համարէ ննցեալ Ապրիլին  
ընտրուած Ընտրողական եւ հաշուեքնիչ յանձնախումբերը, եւ կը  
հրահանգէ որ նախորդ թղթակցութեամբ ձեզի ըրած յանձնարարութեան  
համաձայն, փութով Առաջնորդարան դրկէք Ս. Յովհաննէս Մկրտիչ  
եկեղեցւոյ տրասու անդամներուն մշտական ցանկը:

Խորին յարգանք


Սուրէն Մանուէլեան

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ  
Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Հեռախոս 371-4484

Արժ. Տ. Կիւրեղ Բնյ. Գալֆայեան

Հոգեւոր Հովիւ



ST. JOHN THE BAPTIST  
Armenian Apostolic Church of Miami

Tel. 371-4484

Rev. (Father) Guregh Kalfayan

Pastor

120 N. E. 16TH STREET  
MIAMI, FLORIDA 33132

Սոյմեքոր 23, 1973

Գերաշնորհ  
Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի եւ  
Նախագահ Թեմական Խորհուրդի  
Նիւ Եորք, Ն.Յ.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Ժխական Խորհուրդի անդամներուն եւ մեր կանխայայտ շնորհակալութիւնն ու  
որդիական երախտագիտութիւնը կը յայտնենք Ձերին Սրբազնութեան, որ արտօնութիւն  
տուիք մեզի, որ յառաջիկայ Յունուարին կատարենք մեր Ժխական Խորհուրդի  
անդամներուն նոր ընտրութիւնը:

Սրբազան Հայր, Սոյեմբեր 20, 1973ի թուակիր Ձեր նամակին մէջ մեզի  
արտօնութիւն տալէ յետոյ, յիշածէիք նաեւ թէ՛ գումարենք մասնակի ժողով  
մը, կատարելու ընտրողական Յանձնախումբի ընտրութիւնը:

Սրբազան Հայր, ինչպէս ծանօթ է Ձերին Սրբազնութեան, որ անցեալ Ապրիլին  
Ձերին արտօնութեամբ իսկ կատարեցինք ընտրողական եւ Հաշուէքննիչ Յանձնա-  
խումբերու ընտրութիւնը եւ արդիւնքը հաղորդեցինք Ձերին Սրբազնութեան: Ուրեմն,  
եթէ չեղեալ կը նկատէք այդ ընտրութիւնը, եւ եթէ յարմար կը նկատէք, մեզ  
տեղեալ պահեցէք:

Սրբազան Հայր, մինչեւ հիմայ չեմ ստացած Ձեր կողմէ դրկուած ֆորմերը:

Ստաջիմ Ձերդ Սրբազնութեան  
Ի Կ. Աշոյի  
*Guregh Kalfayan*  
Կիւրեղ Բնյ. Գալֆայեան Հովիւ



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

Մայիս 81, 1977

Արժանաշնորհ  
Տ. Կիւրեղ ԲՏՆՅ. Գալֆայեան  
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Ատաղան Գրական Խորհուրդի  
Մայամբ.

Սիրելի Տէր Կիւրեղ,

Նորոգ հանգուցեալ Հայկ Գավուրքեան 102 տարեկան պիտի ըլլար այս տար-  
ւան Օգոստոսին: Եւրջ քառասունըհինգ տարիներ յօգուտ իր ազգին եւ եկեղե-  
ցիին կատարած իր դրական ծրագրումներուն, սրտեռանդն ջանքերուն եւ իրազոր-  
ծումներուն ամենէն գեղեցիկ կոթողը պիտի մնայ Մայր Տաճարի, Մշակութային  
Կեդրոնի եւ Առաջնորդարանի համալիրի կառուցումը նիւ Եորք քաղաքի սրտին  
վրայ:

Լուսահոգի Հայկ Գավուրքեան իր կեանքի մինչեւ վերջին պահը մտածեց եւ  
աշխատեցաւ կերպն ու միջոցը գտնել Մայր Տաճարի պարտուց բարձման: Այս մեծ  
բարերարին շունչը դժբախտաբար յանկարծ սպառեցաւ, առանց լրացնել կարենալու  
իր այդ առաջադրութիւնը:

Իր մեկնումով ձգուած այս խոշոր բացը կամրջելու համար Առաջնորդարանէն  
ներս նոր ծրագրումներով զբաղեցան Հայկ Գավուրքեանի անձն ու ոգին յարատեւ  
վառ պահելու նախանձախնդիր բարեկամներ: Անոնք, յետ լուրջ խորհրդածութեան,  
յառաջացուցին Կեդրոնական Գործադիր Մարմին մը, որուն կազմի անդամներն են.

- |                           |                     |
|---------------------------|---------------------|
| Տիար Տատուր Տատուրեան     | Ատենապետ            |
| Տիար Սուրէն ֆէսմեան       | Գանձապահ            |
| Տիար Եղուարդ Պաշեան       | Բ. Գանձապահ         |
| Տ. Գառնիկ ԲՏՆՅ. Հալլաճեան | Քարտուղար           |
| Տ. Աոնակ ԲՏՆՅ. Գասպարեան  | Բ. Քարտուղար        |
| Տիար Բիչըրտ Գ. Կրէկըրի    | Օրինական Խորհրդատու |

Կեդրոնական Գործադիր Մարմինը կազմեց Հայկ Գավուրքեանի ոգեկոչման կար-  
գացոյց մը, որուն գործադրութեան ընթացք պիտի տրուի սոյն թուականէն մին-  
չեւ Օգոստոս 20, որ ծննդեան թուականն է ողբացեալ Հայկ Գավուրքեանի:

Յանձնախումբի նպատակն է ապահովել 102 անձեր որոնք տրամադիր ըլլան իւրաքանչիւրը 1000 --մէկ հազար-- տուար նուիրել, եւ գտնել 1000 անձեր որոնցմէ իւրաքանչիւրը 102 --հարիւր երկու-- տուար յանձն առնէ նուիրել Հայկ Գավուրժեանի յիշատակին:

Մնացեալ պարտքի գումարն է 750,000 --եօթը հարիւր յիսուն-- հազար տուար, որուն դիմաց դրամատան մէջ ունինք միայն 150,000 --հարիւր յիսուն հազար-- տուար՝ որ մէկ տարուան վճարումն է:

Սոյն նպատակին կարեւորութիւնը նկատի ունենալով կը յանձնարարենք.


1. Հոգեհանգստեան Պաշտօն կատարել մեր թեմի եկեղեցիներուն մէջ Հայկ Գավուրժեանի հոգւոյն համար, անոր մահուան քառասունքին առթիւ, Յունիս 5էն մինչեւ Յունիս 26, ըստ յարմարութեան:

2. Կազմել տեղական յանձնախումբ մը հետապնդելու համար առաջադրուած նպատակը: Յանձնախումբի անդամներուն անունները հաճեցէք մեզի ղրկել մինչեւ Յունիս 16: Եթէ փափաքին, համայնքներ կրնան քառասունքի Հոգեհանգիստէն յետոյ մատաղի ծաշ հրամցնել ներկաներուն, եւ այդ առիթով բացատրել նպատակը եւ ծրագիրը կազմուած յանձնախումբին: Նուէրները պէտք է Առաջնորդարան ղրկուին նուիրատուներու հասցէներով:

3. Ձեր համայնքին մէջ հաճեցէք գտնել 100 անձեր, որոնցմէ իւրաքանչիւրը փափաքի 102-ական տուար նուիրել Հայկ Գավուրժեանի յիշատակին, Ս. Վարդան Մայր Տաճարի պարտուց բարձման համար:

Լիայոյս ենք որ Կեդրոնական Գործադիր Մարմնի այս սկզբնական աշխատանքներուն սատար հանդիսանալու համար, մեր հոգեւոր հովիւներն ու ծխական խորհուրդները բարենախանձութեամբ պիտի կատարեն յիշեալ ոգեկոչումները եւ պիտի անպայման արդիւնաւորեն նուիրահաւաքման գործը: Այսպէսով լաւագոյնս արտայայտած պիտի ըլլանք մեր սէրը ``Համայնքի նահապետ`` պատուանունով ճանչցուած Հայկ Գավուրժեանին, որուն հոգին երկնային լոյսերու մէջէն կը հետեւի մեր համադրեալ ջանքերուն:

Սիրոյ ողջունիւ



ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ



Քիւ 25076  
Յունուար 18, 1977

Ազնուափայլ  
Տիկ. Արշալոյս Դարբինեան  
Մայամի.

Ազնիւ Տիկ. Դարբինեան,

Ստացած ենք Դեկտեմբեր 14, 1976 թուակիր Տ. Կիւրեղ  
Էհնյ. Գալֆայեանի ուղղած ձեր նամակին օրինակը:

Գրած ենք Տէր Հօր բացատրութիւն պահանջելով ձեր նա-  
մակին բովանդակութեան կապակցութեամբ, եւ կը սպասենք ա-  
նոր պատասխանին:

Այս առթիւ մեր շնորհակալութիւնը կը յայտնենք ձեր  
ներփակած նուէրին համար:

Ուրախ պիտի ըլլանք եթէ վերանկատողութեան ենթարկէք  
ձեր հրաժարումը՝ յիշական ժողովի քարտուղարութեան պաշտօ-  
նէն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵԳՈՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ

Քիւ 25077  
Յունուար 18, 1977

Արժանաշնորհ  
Տ. Կիւրեղ ԷՏՆՅ. Գալֆայեան  
Նախագահ Ժիական Թորհուրդի  
Մայամի.

Սիրելի Տէր Կիւրեղ,

Ստացած ենք Տիկ. Արշալոյս Դարբինեանի ձեզի ուղղած  
Դեկտեմբեր 14, 1976 թուակիր նամակին օրինակը:

Համեցէք մեզի հաղորդել ձեր եւ ժիական ժողովի Աան-  
նապետին անհրաժեշտ բացատրութիւնները վերոյիշեալ նամա-  
կին մէջ արծարծուած հարցերուն առնչութեամբ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԷՆԳԻՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ

Քիւ 25719  
Մարտ 31, 1978

Արժանաշնորհ  
Տ. Կիւրեղ ԲՆՆյ. Գալֆայեան  
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Նախագահ Ժիական Խորհուրդի  
Մայամի.

Սիրելի Տէր Կիւրեղ,

Ստացած ենք Մարտ 17, 1978 թուակիր ձեր նամակը:


Կը թելադրենք որ ժիական Խորհուրդդ ի մտի ունենայ Թեմական Խորհուրդի առած որոշումը Տ. Հմայեակ Եպս. Ինդոյեանի կացութեան մասին, որուն կապակցութեամբ ցայժմ որեւէ փոփոխութիւն ~~պիտի~~ չէ ունեցած: Սակայն նկատի ունենալով որ Հմայեակ Սրբազան եղած է նախկին Հոգեւոր Հովիւը՝ եթէ ժիական Խորհուրդը կը փափաքի զինք հրաւիրել որպէս զի ներկայ զրտնըւի Եկեղեցւոյն օժման 25-ամեակի տօնակատարութեան՝ մենք որեւէ առարկութիւն չունինք:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

**Ս. ՅՈՒՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ**  
Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի

Արժ. Տ. Կիւրեղ Բնյ. Գալֆայեան  
Հոգեւոր Հովիւ Հեռախօս 371-4484



**ST. JOHN THE BAPTIST**  
Armenian Apostolic Church of Miami

Rev. (Father) Guregh Kalfayan  
Pastor Tel. 371-4484

Մարտ 17, 1978

Գերաշնորհ  
Տ. Խորզոմ Արքեպս. Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի եւ  
Նախագահ Խեմական Խորհուրդի  
սիւ Եորթ, Ն.Յ.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Մեր այս գրուածամբ կուզանք հաղորդել Ձերդ Սրբազնութեանը որ,  
Եկեղեցւոյս Ժխական Խորհուրդի անդամները մեզմէ խնդրեցին որ, Ձեզի  
ղիմենք եւ Ձեր գրաւոր արտօնութեամբ եւ հրամանով՝ մեր Եկեղեցւոյ  
Օձման Քսանհինգ-ամեակի տօնակատարութեան հրաւիրենք՝ այս համայնքին  
նախկին հոգեւոր Հովիւ՝ Գերշ. Տ. Հմայակ Եպս. Ինթոյեանը:


Սրբազան Հայր, Մենք հարկ եղած բացատրութիւնը տուինք Ժխական  
Խորհուրդի անդամներուն, սակայն, կարգ մը անդամներ, մեր տուած այդ  
բացատրութենէն զոն չմնալով՝ մեզմէ խնդրեցին որ, նամակով մը Ձեր  
կամքն ու Ձեր որոշումը գրաւոր ստանան:

Սրբազան Հայր, մեր բոլոր կանխայայտ շնորհակալութիւնը յայտնելէ  
յետոյ, կսպասենք Ձերին պատասխանին:

Մատչելով Ձերդ Սրբազնութեան

ի Սրբ. Աշոյճ  
*Guregh Kalfayan*  
Կիւրեղ Բնյ. Գալֆայեան Հովիւ

**Ս. ՅՈՒՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ**  
Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի



**ST. JOHN THE BAPTIST**  
Armenian Apostolic Church of Miami

Արժ. Տ. Կիւրեղ Բհնյ. Գալֆայեան  
Հոգեւոր Հովիւ Հեռախօս 371-4484

Rev. (Father) Guregh Kalfayan  
Pastor Tel. 371-4484

ՅգԼԼԻՍ 5, 1979

Գերաշնորհ  
Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի եւ  
Նախագահ Թեմական Խորհուրդի  
Նիւ Եորք, Ն. Ե.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Այս գրութեամբ կուզանք հաղորդել Ձերդ Սրբազնութեան որ, ատենին ստացած ենք Ձերդ Սրբազնութեան պաշտօնագիր նամակը թուագրեալ 26429 Յունիս 22, 1979ին:

Վերոյիշեալ Ձերդ այս նամակին մէջ կուզաք հաղորդել մեզի որ, Թեմական Խորհուրդը իր Յունիս 15, 1979 նիստին մէջ մեզի հանդէպ առած է հետեւեալ որոշումը որ, Մասնաւոր Անդամական Ժողովի մը հրաւիրենք Ս. Յովհաննէս Մկրտիչ Հայց. Եկեղեցւոյ տրատու անդամները: Եւ ապա այս ժողովին համար պատրաստած է Օրակարգ մը Հոգեւոր Հովիւին մասին վստահութեան Զուէարկութեան համար:

Սրբազան Հայր, հանդերձեալ ենք Ձերին ուշադրութեանը յայնձնել եւ յայտնել մեր կարծիքն ու գաղափարը այս որոշումին նկատմամբ: Մենք Ձերին հրահանգով եկած ենք Մայամի եւ ընդունած ենք Ս. Յովհ. Մկրտիչ Հայց. Եկեղեցւոյ Հովիւական պաշտօնը: Ձերին Սրբազնութիւնը նշանակած է մեզ որ մենք մեր ծառայութիւնը բերենք այս համայնքին գործերուն: Ուրեմն, Թեմական Խորհուրդի տուած որոշում որ, մեր մասին վստահութեան Զուէարկութիւնը մը ըլլայ այս համայնքի տրատու անդամներուն կողմէ, կարծես թէ Ձերին հեղինակութեան եւ պաշտօն հակասական է, եւ համամեմտական չէ, որ հովիւ մը իր ծխականներուն կողմէ վստահութեան Զուէ մը առնէ: Այլ, այսպիսի որոշում մը խոտոր կը թուի ըլլալ եւ նախընթացք մը կը ըլլայ ի դէմս բոլոր ծխական Խորհուրդներուն:

Սրբազան Հայր, այս թեմին մէջ գործող բոլոր հոգեւորականները ենթակայ են Ձերին հեղինակութեան եւ Ձերին հրահանգներուն: Որեւէ մէկ հոգեւորական մը եթէ չենթարկուիր ձերին տուած որոշումներուն, կամ այդ հոգեւորականը ունի բարոյականի տկարութիւն մը, եւ այդ թեմին հոգեւոր դասուն համար գատիւ մը չէ այդ հոգեւորականը ունենալ իրենց մէջ: Ձերին Սրբազնութիւնն իբրեւ Առաջնորդ եւ Ռբել Հեղինակութիւնը կրնայ տալ այդ վստահութիւնը: Մենք որպէս հոգեւորական երբէք համաձայն չեն որ, Ձերին հեղինակութիւնը եւ Ձերին իրաւունքները խախտի եւ նախընթացք մը ստեղծէ ի դէմս ծխական Խորհուրդներուն:

Սրբազան Հայր, եկեղեցւոյս ծխական Խորհուրդը նամակով մը իր զգացումն ու իր վստահութիւնը յայտնեց Ձեր Սրբազնութեանը եւ Թեմական Խորհուրդին: Ձեր Սրբազնութեան գրած վերոյիշեալ այս նամակին մէջ,  
120 N.E. 16th STREET, MIAMI, FLORIDA 33132

յիշեցումէ մը գատ ուրիշ որեւ մէկ ակնարկութիւն մը չկար թէ՛ Ձերին Սրբազնութիւնը կամ Խեմական Խորհուրդը ընդունած է այդ նամակին բովանդակութիւնը:

Սրբազան հայր, եզրափակելէ առաջ մեր այս նամակին բովանդակութիւնը, կուզանք որդիական ջերմ գգացումներով յայտնել մեր յարգանքն ու երախտագիտութիւնը Ձերին անձին, պաշտօնին եւ հեղինակութեան: Մենք որպէս հոգեւոր հովիւ՝ միշտ հպարտ եղած ենք եւ պիտի մնանք նոյն սկզբունքին վրայ: Հետեւաբար, Ձերդ Սրբազնութենէ՛ կը խնդրենք որ, 'ի ուր այս հարցին շուրջ տայիք ձեր արդար որոշումը եւ Ձերին վստահութիւնը:

Մնամ Խորհական Յարգանք

Կիւրտ Բեյ. Գլխաւոր

Կիւրտ Բեյ. Կալֆայեան հովիւ,  
Ս. Յովհ. Մկրտիչ հայր. Եկեղեցւոյ

Քիւ 26889  
Մայիս 22, 1979

Արժանաշնորհ  
Տ. Կիւրեղ ԷՏՆՅ. Գալֆայեան  
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Ակեղեցւոյ  
Մախազան Ժիական Խորհուրդի  
Մայմի.

Սիրելի Տէր Կիւրեղ,

Սաացած ենք Մայիս 14, 1979 թուակիր ձեր նամակը, որով կը փա-  
փաքիք ունենալ համայնքիդ անդամներուն դրկուած հարցարաններուն  
արդիւնքը՝ Բացառիկ Անդամական Ժողովին ներկայացնելու համար:

Յիշեալ հարցարաններուն արդիւնքը հետեւեալն է. 78 հոգի եկե-  
ղեցւոյ շէնքը նոյն հոգին վրայ կառուցանելու համար են. 56  
հոգի երկու առանձին համայնք կազմելու համաձայն են. 58 հոգի  
հիւսիսային կողմը փոխադրուելու համար են. իսկ 88 հոգի նա-  
խընարութիւն չունին:

Համեցէք Բացառիկ Անդամական Ժողովին առած որոշումները անմի-  
ջապէս մեզի տեղեկացնել գրաւոր կերպով:

Սիրոյ ողջունելու

ԹՈՐԳՈՄ ԱՐԷՇԳԻՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ

Օրինակ՝ Ակեղեցւոյ Շինութեան  
Ցանձնախումբի Աստեապետին

**Ս. ՅՈՒՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ**  
Հայ Առաքելական Եկեղեցի, Մայամի



**ST. JOHN THE BAPTIST**  
Armenian Apostolic Church of Miami

Արժ. Տ. Կիւրեղ ԲՏՆՅ. Գալֆայեան  
Հոգեւոր Հովիւ Հեռախօս 371-4484

Rev. (Father) Guregh Kalfayan  
Pastor Tel. 371-4484

Մայիս 14, 1979

Գերաշնորհ  
Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի եւ Նախագահ  
Թեմական Խորհուրդի  
Նիւ Եորք, Ն. Ե.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Եկեղեցւոյ ծխական Խորհուրդը իր վերջին ժողովին մէջ, հարց դրաւ թէ՛ ինչո՞ւ Առաջնորդ Սրբազան Հայրը, մեր համայնքին բոլոր անդամներուն դրկուած հարցարաններուն արդիւնքը մեզի չհաղորդէր: Անոնց հարցում սա էր որ քանի այդ հարցումները պատրաստուած էին եւ դրկուած էին որոշ նպատակի մը համար, եւ քանի որ, Սրբազան Հայրը այդ հարցարանները իր տրամադրութեան տակ ունի, արդիւնք կարելի չէ իրմէ խնդրել որ, նամակով մը մեզ տեղեակ պահէ այդ հարցարաններուն արդիւնքը:

Սրբազան Հայրը, ինչպէս գիտէք՝ Եկեղեցւոյ ծխական Խորհուրդի Ատենապետ Տիար Սարգիս Մանուկեանին հետ միասին, Ձերդ Սրբազանութեանը հետ հանդիպում մը ունեցանք Հինգշաբթի, Մայիս 1, 1979ին, Լօվէլլի Սր. Կարդանանց Հայց. Եկեղեցւոյ մէջ, եւ առ այդ, Ձերդ Սրբազանութեան հաղորդեցինք որ, Կիրակի, Յունիս 3, 1979ին պիտի գումարենք ծխական Բացառիկ Ժողով մը, եւ այս ժողովին պիտի ներկայացնենք Սոր Եկեղեցւոյ Ծինութեան հարցը:

Սրբազան Հայր, Եկեղեցւոյ ծխական Խորհուրդի բոլոր անդամներուն եւ մեր ջերմ գագցումները եւ կանխայայտ շնորհակալութիւնը կը յայտնենք Ձերդ Սրբազանութեան՝ եւ կը խնդրենք Ձեզմէ որ, մինչեւ մեր այս ժողովին թուականը, նամակով մը ծխական Խորհուրդին հաղորդէիք սոյն հարցարաններուն մէջ տրուած հարցումներուն արդիւնքը, որպէսզի, ծխական Խորհուրդն ալ առ ի բացատրութիւն եւ ի գիտութիւն զայն կարոյ ծխական Բացառիկ ժողովին:

Մատչելով Ձերդ Սրբազանութեան  
ի սուրբ Աջոյն  
Կիւրեղ ԲՏՆՅ. Գալֆայեան Նախագահ,  
Ծխական Խորհուրդին



Քիւ 26881

Մայիս 17, 1979

Արժանաշնորհ

Տ. Կիւրեղ Էհնյ. Գալֆայեան  
Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Նախագահ Ժիական Խորհուրդի  
Մայամի.

Սիրելի Տէր Կիւրեղ,

Քեմական Խորհուրդի նիստին մէջ նկատի առինք Մայամի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ համայնքին ներկայ կացութիւնը եւ ֆորթ Լոսըրտէյլի շրջանի մէջ բազմացող հայ ընտանիքներու պարագան, եւ որոշեցինք երկրորդ համայնք մը կազմակերպել Մայամի բաղարի հիւսիսային մասին մէջ, եւ արտօնել որ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ համայնքը իր ներկայ կալուածին վրայ կառուցանէ նոր եկեղեցի մը:

Երկրորդ համայնքի մը կազմակերպման համար մենք պիտի նշանակենք յանձնախումբ մը որ ուղղակի ենթակայ պիտի ըլլայ Առաջնորդարանիս եւ մեր ցուցմունքներուն համաձայն պիտի կազմակերպէ երկրորդ համայնքը:

Իսկ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ նոր շէնքի կառուցման համար կը հրահանգենք որ հետեւիք հետեւեալ ուղեցոյցին:

Հրաւիրել Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ տրատու անդամները Մասնաւոր Ժիական Ժողովի մը հետեւեալ օրակարգով.

- ա. Ստանալ ներկայ Եկեղեցւոյ Երեսման Յանձնախումբի տեղեկագիրը:
- բ. Որոշել ներկայ կալուածին վրայ շինուելիք Եկեղեցւոյ մասաւոր ծախքը:
- գ. Նշանակել Եկեղեցւոյ Երեսման նոր Յանձնախումբ մը, եւ նշել անոր պարտականութիւնները:

Մասնաւոր Ժիական Ժողովի որոշումները եւ նոր եկեղեցւոյ կառուցման հետ կապուած յաջորդական ծրագիրները պէտք է ներկայացնէք Առաջնորդին եւ Քեմական Խորհուրդի վաւերացման:

Առաջած ենք Ապրիլ 28 թուակիր ձեր նամակը եւ Մայամիի բաղաբաղեաւարանի Շէնքերու բննիչին երկու պաշտօնագիրները մեր եկեղեցւոյ շէնքին ներկայ Քացութեան մասին: Ուրախ ենք որ մինչեւ 1979 Հոկտեմբեր ժամանակ տուած են որ մեր համայնքը տեղեկագրէ շէնքի մասին:

Կը մաղթենք որ Աստուծոյ օրհնութիւնը անպակաս մնայ մեր հաւատացեալ ժողովուրդին վրայ, եւ համերաշխ գործակցութեամբ արդիւնաւորուի աստուածահամոյ այս ձեռնարկը իր փառքին համար, եւ մեր ժողովուրդին կրօնական, ազգային, մշակութային եւ ընկերային կեանքի բարգաւաճման համար:

Սիրոյ ողջունիւ

**ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈՊՈՍ**  
Առաջնորդ

Քիւ 26599  
Դեկտեմբեր 14, 1979

Արժանաշնորհ  
Տ. Կիւրեղ ԲՆՆՅ. Գալֆայեան  
Հովիւ Ա. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ  
Նախագահ ծխական Խորհուրդի  
Մայամի.

Սիրելի Տէր Կիւրեղ,

Փլօրիտայնահանգին մէջ ներկայիս ունինք երկու կազմակերպուած համայնքներ: Առաջինը Մայամիի Ա. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ համայնքն է՝ որ երեսուն տարիներէ ի վեր կազմակերպուած է, եւ Առաջնորդին ու Թեմական Խորհուրդին հաւանութեամբ ներկայիս աշխատանքներ կը տանի նոր Եկեղեցի մը շինելու:

Երկրորդը Հայց. Եկեղեցւոյ Հարաւային Փլօրիտայի անունով կազմուած նոր համայնքն է: 1979 նոյեմբեր 25ին, առաջին Սուրբ Պատարագը մատուցինք Սէյնթ Մարթին-ին-Տհը-ֆիլա եպիսկոպոսական Եկեղեցւոյ մէջ, Փօմփինս Պիչ: Առժամեայ ծխական Խորհուրդին յանձնարարած ենք որ կազմակերպեն Եկեղեցական, ծխական կազմակերպութիւններ. Կիրակնօրեայ Վարժարան, Հայ Դպրոց, Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութիւն, Դպրաց Դաս, Տիկնանց Միութիւն, եւ այլ յանձնախումբեր ըստ պահանջի:

Ճշդելու համար երկու համայնքներու աշխարհագրական սահմանները եւ անդամագրութեան պայմանները, հետեւեալ հրահանգը կը յանձնենք Մայամիի Ա. Յովհաննէս Մկրտիչ Հայց. Եկեղեցւոյ եւ Հարաւային Փլօրիտայի Հայց. Եկեղեցւոյ հովիւներու եւ ծխական Խորհուրդներու ուշադրութեան, ի գործադրութիւն:

1. Աշխարհագրական սահմաններու ճշդում.- Մայամիի Ա. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ սահմաններուն մէջ կ'իյնան Տէյա Գունսթրիի Հիւսիսային սահմանագիծէն սկսեալ դէպի հարաւ մինչեւ Բի Ուեսթ երկարող տարածութիւնը, եւ բաղարներուն մէջ ընկող հայութիւնը:

Սառուժ ֆլօրիտայի Հայց. Եկեղեցւոյ սահմաններուն մէջ կ'իյնան Տէյտ Գառնիթիէն դէպի Գիւսիս --Գրաուրրա Գառնիթիէն սկսեալ-- երկարող տարածութիւնը, եւ քաղաքներուն մէջ բնակող հայութիւնը:

2. Անդամութեան պայմաններու Յշդում.- Եկեղեցական կարգապահութեան տեսակէտով, ամէն հայ որ կը բնակի որոշ աշխարհագրական շրջանակի մը մէջ, ինքզինք պէտք է նկատէ զաւակ այն համայնքին եւ Հայց. Եկեղեցիին որ կազմակերպուած է այդ շրջանակին մէջ: Եւ սակայն երբեմն կը պատահի որ տեղափոխութեանց պատճառով ընտանիք մը մէկ շրջանակէն միւս շրջանակին մէջ կը փոխադրուի: Այս պարագային նախընտրելի է որ հայ ընտանիքը կամ անհատը ինքզինք նկատէ զաւակ իր նոր փոխադրուած շրջանակին մէջ կազմակերպուած համայնքին եւ Հայց. Եկեղեցիին:

Հակառակ տեղափոխութեան, եթէ ընտանիքը կամ անհատը որոշէ ինքզինք անդամ նկատել միւս շրջանակին մէջ հաստատուած համայնքին կամ Հայց. Եկեղեցիին, ապա է այդ նախընտրութիւնը կատարելու:

Այս պարագային, սակայն, հայ անհատը կամ ընտանիքը պէտք է բացայայտ ընէ իր դիտումը, եւ զայն հաղորդէ իր պատկանած Եկեղեցիին Հոգեւոր Հովիւին եւ Եփական Խորհուրդին:

Համաձայն մեր թեմի Կանոնադրութեան 9րդ յօդուածին, ``իւրաքրանչիւր անձ միաժամանակ միայն մէկ Եկեղեցւոյ քուէարկու անդամ կրնայ ըլլալ:``

Այս հրահանգը կը դրկենք Մայամիի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ եւ Սառուժ ֆլօրիտայի Հայց. Եկեղեցւոյ Հովիւի, Եփական Խորհուրդի, Եկեղեցական կազմակերպութեանց եւ մեր հաւատացեալ ժողովուրդին ի գիտութիւն եւ ի գործադրութիւն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Երբ իմա ներս